



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

4200



281-6
S-30

1865

189

2010

B2001



ՏԵՂԵԿԱԳԻՐ
ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ
ՅԱՆՉՆԱԺՈՂՈՎՈՅ

280
026-56

Sucht
gezwungen
zu sein

281.6 սց 305
280 5-30
1026-86 ՏԵՂԵԿԱԳԻՐ

Ի ՎԵՐԱՅ
ԿԱԹՈԼԻԿՈՍԱԿԱՆ ԽՆԴՐՈՅ

Ա.Ռ.

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

Ի ՏԱԶԿԱՍՄԱՆ

Ի ԴԻՄՈՅ ԿԱԹՈԼԻԿՈՍԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՅ

90494
1003



Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅՐԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ
*Հ.Ս.Պ.Ա. ՇՈԲՈՆԻ ԲՈԼՈՅԻ
7/11. 1922
Ա. ԱՅԱՌԻ ԱՅԱՎՈՅ
ԱՄԵՆԻ ԱՅՆԻ ԱԿԱ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ Ռ. Յ. ՔԻՒՐՔՃԵԱՆ

— 1866 —

Հ.Ա.Հ.

11145

(Учебник гимназии
с иконы Христы)



ՏԵՂԵԿԱԳԻՐ

Ի ՎԵՐԱՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԽՆԴՐՈՑ

ԱՌ ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ

Ի ՏԱՃԱՍՏԱՆ

Ի ԴԻՄԱՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՑԱՆՉԱԺՈՂՈՎՈՑ



Անցեալ Դեկտեմբեր 24ի ընդհանուր ժողովով Արարատեան Մայր Աթոռոյ կաթողիկոսութեան խնդրոյն համար կազմուած Յանձնաժողովոյն ստորագրեալ անդամքս՝ պատիւ ունիմք ներկայացընել պատկառելի ընդհանուր ժողովոյդ՝ ներկայ տեղեկագիրս մեր քննութեանց խորհրդածութեանց և պատրաստութեան յանձնուած հետեւեալ կէտերուն։

Ա. Ա. Էջմիածնայ կաթողիկոսութեան վիճակը քննել։

Բ. կաթողիկոսի ընտրութեան ներկայ եղանակը քննել թէ արդեօք համաձայն է մեր Ա. Եկեղեցւոյ և Ազգին նախնի աւանդութեանցն ու սովորութեանց, և ցոյց տալ թէ ո՞րք են այս մասին մեր նախնեաց օրէնքն ու սովորութիւնքը։

Գ. Այս ընտրութեան մէջ Տաճկատանի Հայոց մասնակցութեան եղանակը որոշել։

Այս ամենակարեւոր փափուկ և ստիպողական պաշտօնը մեր Ա. Եկեղեցւոյ օրինաց և աւանդութեանց համաձայն, միանգամայն կարելի և գործադրելի և լուսաւոր եղանակաւ կատարելու համար՝ Յանձնաժողովս ամեն բանէ յառաջ Ա. Էջմիածնի և Ռուսաստանի Հայոց մէջ բաւական ժամանակ բնակող ու այս մասին ներհուն ճանչուած

Եկեղեցական ու աշխարհական ազգայնոց դիմեց, և յանուն Ազգին ու ՚ի տէր ճշմարտութեան տեղեկութիւն խնդրեց վերոյիշեալ կէտերուն վրայ:

Եւ ահա Յանձնաժողովս իր մետասան նիստերուն մէջ՝ կատարեալ համաձայնութեամբ անդամոց քննեց ու դտաւ որ նախ:

ՄԱՍՆ Ա.

Ամենայն Հայոց Կանոնի կուսանեան արդի վիճակը հետապահ է նախին՝ այսինուն բուռն Հայուսուանեայց Կանոնի կուսական վիճակն՝ իրաւագութեան Հայուսութանիան անկախութեան և եկեղեցեաց գույշութեան նկատմամբ:

Ըստ որում Ամենայն Հայոց կաթողիկոսը զրկուած է ամենայն Հայ Եկեղեցեաց և ամենայն հոգեւոր առաջնորդութեանց վրայ ունեցած օրինաւոր իրաւասութեան իշխանութենէն՝ զոր առաքելական և լուսաւորչական յաջորդութեամբ ՚ի Հոգւոյն սրբոյ օծութենէ ընդունած է:

Ըստ որում չէ կարող իր ստորագասեալ վիճակներուն հետ պարտուպատշաճ հաղորդակցութիւնն ու յարաբերութիւնն ազատորէն գործադրել:

Ըստ որում չէ կարող անկախ և զուտ հոգեւոր խորհրդական ժողով մը ունենալ:

Վասն զի իրեն ու ստորագասեալ գործակից ժողովոյն իրաւանց սահմանները շփոթեալ են:

Վասն զի չէ կարող ՚ի Քրիստոսէ իր Հովուութեանն ու պատասխանատուութեանը յանձնուած Հօտին հոգեւոր առաջնորդները ինքնին կարգել ու արձակել ըստ Լուսաւորչական Եկեղեցւոյ կարգադրութեան:

Վասն զի չէ կարող հոգեւոր հաստատութեանց յարաւու պայծառութեանը համար Ազգին գրամովը հաստատուն կարուածներ դնել:

Ասոնք անցեալ երեսուն տարիներուն մէջ մինչեւ ներկայու պատահած անցից ճշգրիտ պատմութիւններէն և

Հայրապետական թղթակցութիւններէն և ականառես արժանահաւատ եկեղեցական ու աշխարհական անձերէ սուռդուած են :

Ուստի քանի որ ասոնք ճշմարիտ են, կրնայ ըսուիլ թէ արդի վիճակին մէջ Հայոց ընդհանրական Հայրապետը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան անունը միայն կը կրէ :

Եթէ Հայոց Աղդին վայրավատին գրիցն և տարաբաղդիկ անցից անցելոց նկատմամբ անցեալ գարուց մէջ ալ նմանօրինակ մէկ քանի գէպքեր տեսնուին, գիտնալ պէտք է որ Եկեղեցին զանոնք միշտ իրր ապօրինաւորութիւն նը կատած է : Սակայն երեսուն տարիններէ ՚ի վեր՝ արդի վիճակը օրինաւորութեան կերպարանք առած է զօրութեամբ Պալաժէնեա անուն նոր կարգադրութեան մը, որ մէկ քանի Եկեղեցւոյ կարգաց անհմուտ՝ անձերու ձեռօք առաջարկուած է և խմբագրուած, և որուն դէմ ո՛րչափ որ երանաշնորհ Ներսէս և Մատթէոս Կաթողիկոսունք և Հնդկաստանի աղդայինք բողքած ալ են, ՚ի վերայ այսր ամենայնի ցայսօր տիրող օքնաւ է Ուուսաստանի մերազնէից Եկեղեցւոյ՝ որ ըսել է մեր Եկեղեցւոյ վրայ, այնպէս որ՝ ըստ վկայութեան արժանահաւատ անձանց՝ «Մեր Եկեղեցական Վարչութեան մէջ ամենայն ինչ կը վճռուի ըստ զօրութեան յօդուածոց նոյն Պալաժէնեայի, և դիմագարձութեան յանդգնողը կը դատապարտի ո՛չ միայն մեր իսկ Առաջնորդական ատեաններէն՝ այլ և ՚ի Ցէրութենէ» . թէ և, ինչպէս որ Տեղեկագրիտ մէջ պիտի տեսնուի, անոր ինչ ինչ տրամադրութիւնները զանազան պարագաներու մէջ ճշդիւ դործագրուած չեն :

Անցեալ գարերու մէջ կրօնական աղատութիւնը ճընշման ներքեւ ըլլալով, զարմանալի չէ՝ որ Հայաստաննեայց Եկեղեցւոյ իրաւունքը բռնաբարուէր . բայց այսօր, աշխարհիտ ամեն կողմի Ցէրութիւնները՝ որոց մէջ ցրուած է Հայոց աղդը, կրօնական աղատութեան սկզբունքն ընդունած են, և Աստուծոյ ողորմութեամբը և ՚ի Հնորհս Օսմանեան, Ռուսիոյ, Պարսից, Անդղիոյ և Աւստրիոյ Պետութեանց և Մօլովալաքիոյ ու Եղիպատական Կառավարու-

թեանց՝ իր կրօնքն ու Եկեղեցին ազատութեամբ պաշտեւ լու և պահպանելու տէր է և կարող։ Եթէ մեր նախնիք ճնշման ու բռնութեան ներքեւ ամեն ջանք և մինչեւ արեան վերջին կաթիլը զոհեցին ու Եկեղեցին անարատ պահեցին, ամեն Եկամուտ և Եկեղեցւոյ հակառակ սովորութիւններէ մաքրելով, և չը կրցածնուն դէմ բողոքելով, ո՞րչափ եւս առաւել արդի զաւակունք Հայաստան եայց Եկեղեցւոյ պարտաւոր են ջանալ ընդ հովանաւորութեամբ հայրախնամ կառավարութեանց՝ մեր հոգւոյն վրկութեան կարապետն հոգեւոր ծնողն և ազգային միութեան յօգակաան եղող Ս. Եկեղեցւոյ Աստուածային օրէնքն ու աւանդութիւնները պինդ բռնել, և նորա դրից և ոգւոյն հակառակ ամեն օտար Եկամուտ վիասակար և անոր անկախութեանն ու ազատութեանը սպառնացող և պայծառութեանն ու բարեկարդութեանն աղաւաղիչ ո՛ և իցէ կանոն և կարդ մերժել և չընդունիլ։

Զը կայ անկէց աւելի սրբազան բան մը աշխարհի վրայ Հայոց համար ։ առանց Եկեղեցւոյ մեք ո՛չ հոգեւոր ո՛չ մարմաւոր կեանք չունինք. Նա՛ է մեր պսակը, Նա՛ է մեր միսիթարութիւնը, Նա՛ է մեր պարծանքը, Նա՛ է մեր ուրախութիւնը, և Անո՛վ է մեր յաւիտենական կեանքը։ Ուրեմն կենաց և մահու խնդիր է այս։ Հայաստանեաց ուղղափառ Ս. Եկեղեցին՝ ճշմարտութեան և լուսոյ տասն և ութ դարերու արեամբ նահատակեալ ախոյեանն ու վկայն է ։ մեր նախնիքը՝ օրինաց պահպանութեան համար բնաւ ակնառութիւն բնաւ քաղաքական նկատում չ'ունեցան, և ունեցողները նոյն հետայն մերժեցին. իրենց աւանդ մնացած Խաչին ճշմարիտ դրօշակակիրները հանդիսացան. և մինչև մեր օրերը մեր սրբազան կաթողիկոսներն եռանդեամբ և արդեամբ ցուցըցին և ճանչուցին մեզ այս սուրբ պարտաւորութիւննիս. վասն զի առանց ուշադրութեան առաջարկուած 1836 թուի Պալաժէնեա անուն կարդադրութեան վրայ երջանկայիշատակ Ներսէս և Մատթէոս Արքազան Հայրապետք բողոք բառնալով ջանք ըրին և յաջողեցան Ուուսիոյ կառավարութեան ուշադրու-

թիւնը գրաւելու , որ վերջապէս հրաման շնորհեց Պալածէնեայի փոփոխութեան կարօտ կէտերն իրեն առաջարկել⁽¹⁾ :

Վասն զի ի՞նչպէս կարելի է համաձայնեցունել Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ անկախութեան , աղատ իրաւանց , կանոնաց և աւանդութեանց՝ 1836 ի կարգադրութեան հետեւեալ յօդուածները :

ՅՕԴՈՒԱԾ 9.

Եկեղեցիք Լուսաւորչական Հայոց Ռուսաստանեայց իրաւունս ունին տիրելոյ անշարժ կայից . այլ սակայն ոչ այլազդ կարեն 'ի ձեռու բերել կամ օտարացուցանել դայնս , բայց եթէ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ բարեհաճութեամբ ԿԱՅՍԵՐ՝ որ ինոքի 'ի ձեռն նախարարութեան ներքին գործոց ըստ սահմանեալ կարգին :

Ահաւասիկ յայտնի կը տեսնուի թէ ո՞չափ հակառակ է այս յօդուածը Եկեղեցւոյ աղատ իրաւանց . ո՞չափ Եկեղեցական գումարները ցրուելու կամ վատնուելու վտանգի մէջ կը մնան , քանի որ քաղաքի մը ազգայինք իրենց առ ձեռն պատրաստ ստակովը չեն կարող հաստատուն կալուած մը դնել . ինչպէս է Ալխոցխայի ազգային Եկեղեցւոյ կալուածագընութեան խնդիրը , որուն կալուած դնելու համար չոգելցյա Մատթէոս Սրբազնը երեք տարի յառաջ կառավարութեան առաջարկութիւն ըրած և ցայսօր անպատասխանի մացած է :

ՅՕԴՈՒԱԾ 21.

ՑԱՍՏՈՒԱՃԱՅԻՆ պաշտամունս 'ի մէջ Եկեղեցեաց Լուսաւորչական Հայոց՝ անուն Պատրիարք ԿԱՅԹՈՒՂԻԿՈՍԻՆ յիշատակի անմիջապէս զկնի ԿԱՅՍԵՐԻՆ ամենայն Ռուսաց եւ Օգոստափառ ՏԱՆՆՈՐԱ :

ՄԵՐ ԵԿԵՂԵՑՎՈՅ ԿԱՆՈՆԱԳ ՀԱՄԵՐՄԱՏ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԹԱՅ

(1) Երջանկայիշատակ Ներսէս կաթողիկոսն , այս մասին՝ որ եւ է առաջարկութիւն ընելէ առաջ , խորհեցաւ Տաճկաստան և ուրիշ երկիրներ քնակող քնդհանուր Հայոց Խորհրդակցութեանը դիմել , բայց Արեւելեան պատերազմը վրայ գալով իւր այս օրինաւոր և արդար խորհուրդն 'ի գործ դնելու արգելք եղաւ , և վերջն ալ իր յանկարծահաս վախճանը բոլորովին ետ ձեց զայն : Մատթէոս Սրբազնն ալ 1865 ին ծրագիր մը շնած ու առաջարկած է , բայց չի գիտուր ինչ պատճառաւ ընդհանուր Ազգին խորհրդակցութեանը դիմելու օրինաւոր միջոցն 'ի գործ չդրաւ , ինչպէս որ իւր նախորդը խորհած էր :

գաւորի մ'անուն կարելի է յիշատակել, բայց ո՛չ բոլոր ընտանեաց անուններն ալ ՚ի միասին . և այն ալ չէ՛ թէ Ռուսաստանի Հայոց Եկեղեցեաց մէջ մոտած օտար սովորութեան համեմատ Ա. Պատարագի մէջ « Եւս առաւել » ի ժամանակ, վասն զի « Եւս առաւել » լ կենդանի հայրապետին և առաջնորդներուն յիշատակութեան յատկացած ատենն է, և շըրունակութիւնն է պատարագիչ քահանային ծածուկ կարդացած « Յիշեա՛ Տէր և ողորմեա և օրհնեա զուղղափառեպիսկոպոսնս՝ որք ուղիղ վարդապետութեամբ համառօտեն ՚ի մեղ զբանն ճշմարտութեան « աղօթքին, ուր տեղընաւ թագաւորի խօսք ընելու յարմարութիւն չկայ : Այսպիսի յիշատակութիւնն մը՝ միայն « Որ օրհնես զայնոսիկ » աղօթքին և սարկաւագաց կարդացած քարոզներուն մէջ կրնայ ըլլալ, այն ալ քահանայից և սարկաւագաց յիշատակութենէն ետեւ :

ՅՈՒՈՒԱԾ 28.

Ի բազմիլ ԿԱՅՍԵՐԱՑ ամենայն Ռուսաց յԱթոռ Նախահարց՝ Պատրիարքն էջմիածնի առաքէ զմի ոմն ՚ի նախապատիւ անդամոց ուխտի Լուսաւորչական Հայոց Եկեղեցականաց՝ մատուցանել ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ զամենահպատակ շնորհաւորութիւն՝ խնդրելով Ամենողորմ բարեհաճառութիւնն յաղագս առաջիկայ գտանելոյ ՚ի հանդիսի թագալրութեանն ինքեան, եւ կամ ՚ի դէպս անհնարութեան՝ Դէպուտատի իւրում :

Ա.յս Յօդուածը կը սեղմէ Ամենայն Հայոց կաթողիկոսին առ Վեհապետս ունենալու յարաբերութեանց իրաւունքը : Ամենայն Հայոց կաթողիկոսը՝ ամենայն Հայոց հովանաւորող ամեն վեհապետաց գահակալելու ատեն՝ իր բարձր պաշտօնին համեմատ պարտաւոր է անձամբ կամ փոխանորդաբար և կամ շնորհաւորութեան կոնդակաւ մատուցանել իր բարեմաղթութիւնները . բայց միթէ Ռուսիոյ կառավարութեան քաղաքականութիւնը կը ներէ՞ զայս . սակայն Ամենայն Հայոց կաթողիկոսն ալ կրնայ ապախտ առնել այսպիսի պարտաւորութեան մը կատարումը, որ ընդհանուր Հայոց Հոգեւոր Տէր կոչուելու իրաւունքին հետ կապուած է և անկէ կը բղխի բնականարար :

Համաձայն կամոնաց Լուսաւորչական Եկեղեցւոյ Հայոց՝ Մայրագոյն Պատրիարք ԿԱԹՈՒՂԻԿՈՍՆ զհաստատուն բնակութիւն իւր ունի 'ի վանս Եջմիածնի : Յորժամ հարկաւոր համարի նա հեռանալ 'ի վանաց անտի աւելի քան զշորա ամիս , հարցանէ առ այս 'ի ձեռն գլխաւոր կառավարչին Վրաստանի կովկասեան եւ յանկոյս կովկասու եղեալ նահանգաց , եւ 'ի ձեռն նախարարութեան Ներքին դործոց , զբարձրագոյն հաճութիւն նորին ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ :

Այս յօդուածը կաթողիկոսական վեհութեան պատիւ չը բերելու կերպով տրամադրեալ ըլլալին զատ պակասաւոր ալ է : Վասն զի բնաւ յիշատակութիւն չը կայ որ եթէ հարկը պահանջէ՝ զորօրինակ եթէ օտար երկրի մը մէջ ազգային կարեւոր գործոյ մը կամ տարօրինակ դէպքի մը պատճառաւ կաթողիկոսի ներկայութեան ազդեցութեան անհրաժեշտ պէտք ըլլայ , Հայրապետը պիտի կրնայ Ռուսաց սահմանէն դուրս ելնել .

Մահօնութեան . Պատրիարքն իշխան է տնօրինել զսեպհական գոյս իւր ըստ իւրում հաճութեան . եթէ չիցէ արարեալ կտակ , գոյք նորա անցանեն առ օրինաւոր ժառանգս նորին . իսկ եթէ չիցեն նմա ժառանգք՝ այն կայք հաշուին ընդ գոյս Լուսաւորչական եկեղեցւոյ Հայոց :

Այս տրամադրութիւնը բոլորովին հակառակ է Հայաստանեայց եկեղեցւոյ կանոնաց , որ միայնակեաց եկեղեցականաց ուրիշ ժառանգ չը ճանշնար , այլ Միաբանութիւնը՝ որուն անդամեն , և վանքը՝ ուր պատսպարուած կը վարեն իրենց պաշտօնը .

Լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսն Եջմիածնի՝ ընդ նախագահութեամբ Ծայրագոյն Պատրիարք կաթուղիկոսին՝ բաղկանայ 'ի չորից Արք Եպիսկոպոսաց կամ յԵպիսկոպոսաց , եւ 'ի նոյնաթիւ Վարդապետաց՝ որք զհաստատուն բնակութիւն իւրեանց ունին յԵջմիածնի :

Այս յօդուածին մէջ այնպիսի ժողովի մը կարգադրութիւն կը տեսնուի որ սխալ է անոնանձ, պակասաւոր է նոոնձ, և Հայաստանեայց եկեղեցւոյ բոլորովին հակառակ է պաշտօնոնձ:

Հայաստանեայց Լուսաւորչական Ս. Եկեղեցին Սիւնհոդոս բառը յատկացուցած է այն գերազ ոյն և ընդհանրական ազգային եկեղեցական ժողովին՝ որ կաթողիկոսին հըրաւիրմամբը կամ անոր խոտորմունքն ուղղելու համար (եթէ պատահի) հայրապետանոցի միաբանութեան կամ կաթողիկոսական խորհուրդին կոչելովը կը գումարուի եկեղեցական ծանր խնդիրները քննելու և զանանք համաձայն սուրբ Գրոց և տիեզերական ժողովոց օրէնսդրութեան լուծելու համար։ ուստի սխալ է Սինօդ բառը գործածել այնպիսի ժողով մը անուանելու համար՝ որ կաթողիկոսի իշխանութեան ստորագասեալ է, և անոր միայն խորհրդական և գործակից ըլլալու իրաւունք ունի, և որ ըստ նախնի սովորութեան Եկեղեցւոյ՝ պէտք է բաղկանայ երկոտասան եպիսկոպոսներէ, և ո՛չ չորս եպիսկոպոս և չորս վարդապետներէ ու մէկ աշխարհական պրօկորորէ՝ ինչպէս պիտի տեսնենք քիչ մը ետքը։

ՅՈՒՌԻԱԾ 34.

Առ իւրաքանչիւր տեղի Սնդամոց Լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսին՝ Պատրիարքն 'ի ձեռն Գլխաւոր կառավարչին Վրաստանի կովկասեան եւ յայնկոյս կովկասու եղեալ նահանգաց, եւ 'ի ձեռն նախարարութեան ներքին գործոց՝ առաջի առնէ ԹԱԳԱԿԱՆՈՐ ԿԱՑՍԵՐՆ զերկուս կամնդիտասու։

Տարօրինակ տրամադրութիւն մըն է այս որ ընդունուելը է կարգադրութեան մէջ, թերեւս այն նպատակաւ որ ժողովոյ անդամներն իրենց ընտրութիւնը թափառոր կայացին առնելով՝ անկախութեամբ վարուին և համարձակապէս դիմադրեն կաթողիկոսական իրաւասութեան։ Մեր աղդային եկեղեցւոյ կարգը կը սովորեցընէ որ եկեղեցւոյ Սինօդը կամ ընդհանրական ժողովը Ազգին ընդհանրութեան ձայնովը Հայոց վիճակաւորներէն կը բաղկանայ։ իսկ Հայրապետա-

նոցի ժողովը տամներկու եպիսկոպոսներէ պէտք է բաղկանայ՝ որք ընտրուին Ազգին զանազան երկիրներու մէջ ու նեցած եկեղեցիներէն, և Հայրապետն անուանէ զանոնք :

35 և 36 յօդուածներուն մէջ Ա. Էջմիածնի Սինօդին՝ ի մասին կառավարութեան 16 և դատաստանական մասին 4 տրամադրութիւն կը տեսնուին, որոց զօրութեամբը Սմենայն Հայոց կաթողիկոսն իր ամենաբարձր աստիճանաւն հանդերձ՝ ստորագրութիւն դնելէ և Սինօդին վճռոյն կամայ ակամայ կնիք զարնելէ զատ ուրիշ Եշխանութիւն չունի:

ՅՈՒԹԻԱԾ 37.

Լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսն Էջմիածնի ընդ անմիջական վերատեսչութեամբ Ծայրագոյն Պատրիարքին՝ տայ զվախճանական վճիռ ամենայն գործոց վերաբերելոց առ վարդապետութիւնս հաւատոյ, առ Եկեղեցական պաշտամունս, ծէսս եւ պսակս, եւ առ այն յանցաւորութիւնս Եկեղեցականաց՝ որք ոչ պատկանին քննողութեան մարմնաւոր դատարանաց։ Այս Սիւնհոդոս՝ ըստ գործոց Լուսաւորչական Եկեղեցւոյ Հայոց Ռուսաստանեաց՝ կայ ընդ վերատեսչութեամբ կառավարիչ Սինկղիսոսին (Սէնաթին) եւ նախարարութեանն ներքին գործոց, հաւասար այլոց Ծայրագոյն Հոգեւոր ատենից օտարազգի դաւանութեանց :

Ահա այս յօդուածին տրամադրութեամբը յայտնի կը տեսնուի որ Օրէնսդիրը շփոթերէ Հայաստանեայց Եկեղեցւոյ ընդհանուր Եկեղեցական Սիւնհոդոսին ու Հայրապետանոցի կաթողիկոսական խորհուրդին իրաւասութեան սահմանները և պաշտօնը։ Առաջինին վերապահեալ «Տայ» զվախճանական վճիռ ամենայն գործոց վերաբերելոց առ վարդապետութիւնս հաւատոյ (համայնքն բանի Ա. Գրոց և հետո առաջնաւունք տիեզերական ժողովց կանուաղին Եկեղեցւոյ պէտք էր «աւելցունել»), առ Եկեղեցական պաշտամունս, ծէսս եւ «այն» Երկրորդին յատկացուցերէ։ և որ աւելի զարմանալին է, այս վերջինն այսպիսի բարձր պաշտօնով ճոխացնելէն ետեւ, բերեր ենթարկերէ Ռուսիոյ տէրութեան կառավարիչ Սինկղիսոսին և ներքին գործոց նախարա-

ըութեան . և իրը թէ արդարացընելու համար այս տարօրինակ կարդադրութիւնը , յաւելցուցեր է ամ միսիթարիչ ու միանգամայն շացուցիչ պարբերութիւնը . “ Հաւասար այլոց ծայրագոյն հոգեւոր ատենից օտարազդի ողաւանութեանց ” որոց կարդն են նաեւ Հըէայք : Ուրեմն Ռուսիոյ նկատմամբ մեք Հայաստանեայքս օտարազդի դաւանութեան տէր ենք , և մեր դաւանութեան հոգեւոր ծայրագոյն ատեանը (որ ըստ մեզ չէ և չկրնար ըլլալ այն որ նաև կը կարգադրէ) կայ ընդ վերատեսչութեամբ Անտառներ և Մէնէնքու այլադաւան տէրութեան դարձեալ կ'ըսենք զարմանալի դրութիւն և տարօրինակ կարդադրութիւն :

ՅՕԴՈՒԱԾ 40.

Լուսաւորչական Հայոց Սիւնհոգոսն Եջմիածնի վարի ըստ իրաւանց կ'լէնքայէց , բայց յամենայն պարզ հոգեւորական գործս Պատրիարքն ունի զձայն վճռողական , իսկ յայլ գործու եթէ հաւասար են ձայնք Անդամոցն՝ ձայն նորա իրեւ նախագահի , է հակամէտ :

ՅՕԴՈՒԱԾ 41.

Ի քննութեան իրաց՝ յորս Պատրիարքն Եջմիածնի ունի զձայն վճռողական , չգտանի անձամբ 'ի Սիւնհոգոսի , այլ հասու եղեալ եղրակացութեանց Սիւնհոգոսին յօրագրութիւնս մատուցեալս նմա , տայ ըստ այնց դիւր վճիռ :

ՅՕԴՈՒԱԾ 42.

Յորժամ Պատրիարքն Եջմիածնի ոչ գտանի անձամբ 'ի Լուսաւորչական Հայոց Սիւնհոգոսի , գտեղի նորա ունի երիցագոյնն յԱրք Եպիսկոպոսաց կամ յեպիսկոպոսաց Անդամոց այսր Սիւնհոգոսի : Նա վարի ամենայն իրաւամբ նախագահի յայնոսիկ դէպս միայն , յորժամ Պատրիարքն ինքնին չկարէ ներկայ գտանիլ 'ի պատճառս հիւանդութեան կամ բացակայութեան յԵջմիածնի . իսկ պարզ հոգեւորական գործք՝ յորս Պատրիարքն ունի զձայն վճռողական , յոչինչ դէպս կարեն վճռիլ առանց Պատրիարքին 'ի ժամ պարապութեան Պատրիարքական Աթոռոյն : Վճռահատութիւն սոյնաւեսակ գործոց յետաձգի ցընարութիւն նորոյ Պատրիարքին :

Կարդ գործառնութեան Լուսաւորչական Հայոց Սիւնհողոսին Ելմիածնի, իրաւունք եւ պարտաւորութիւնք Անդամոց եւ Աստիճանաւորաց Դիւանատան նորին, սահմանադրին ընդհանուր կարգադրութեամբք՝ զորս ունին կովեղիայքն :

Այս յօդուածներով կը տեսնուի որ Ամենայն Հայոց կաթողիկոսութեան ստորագասեալ ազգային հոգեւոր ատեամբ, յամենայնի պարտաւոր է վարիլ համաձայն կարգաց և կանոնաց Ռուսիոյ Տէրութեան կոլեղիային (ատենին) և Ամենայն Հայոց Հայրապետն ու Հոգեւոր Տէրն Հայաստանեաց Եկեղեցւոյ նոյն ատեանին մէջ իրեւ Ատենապետ (ինչպէս նաեւ կստորագրէ սոյն բառով) երկու ձայն ունի երբ խնդրոյ մը վրայ անդամոց կէսը մէկ կերպ և միւս կէսը մէկ կերպ վճիռ առաջարկեն. յակ երբ խնդրոյ մը վրայ անդամոց մեծագոյն մասը միեւնոյն կարծիքը յայտնէ, կաթողիկոսը պարտաւոր է զայն ընդունիլ և ստորագրել թէւ հակառակ ըլլայ իր կարծեաց և թերեւս վնասակար Ազգին և Եկեղեցւոյ :

Այս յօդուածոյ մէջ Պալաժէնեան միայն մէկ շնորհ մը ըրած է ընդհանուր Ազգին Հայրապետին, այն է «յամենայն պարզ հոգեւորական» գործս զձայն վճռողական» անոր յատկացուցեր է 40 յօդուածով. բայց Հայրապետն այս շնորհը վայելերու համար կը պարտաւորի այնպիսի պարզ Հոգեւորական խնդրոց որոշման ժամանակ՝ ժողովին մէջ անյաջք ներկայ գանուիլ. ապա թէ ոչ 41 յօդուածը կը տրամադրէ որ այն պարզ հոգեւորական գործոց վճռողական ձայնը՝ որ կաթողիկոսին է, և որ ըստ 42 յօդուածոյ՝ կաթողիկոսական աթոռոյ պարապութեան ժամանակ՝ ոչ ոք իրաւունք ունի գործածել, չողովն կ'անցնի երբ կաթողիկոսը կենդանի է, բայց ժողովին ներկայ չը գտնուիր. այս պարագային մէջ կաթողիկոսն և հասու եղեալ եղրած «կացութեանց Սիւնհողոսին յօրագրութիւնս մատուցեալս նմա, տայ լՍՏ ԱՅՆՑ զիւր վճիռ ո: Ուշագրութեան և զարմացման արժանի չե՞ն այս լՍՏ ԱՅՆՑ բառերը. և իրաւունք չունի՞նք կասկածելու որ Պալաժէնեան սոյն տրամադրու-

թիւններով կամք ըրեր է ընդհանուր Հայոց Հայրապետին հոգեւորական իշխանութիւնը կապտել, և զայն ենթար կելով Սինօդ անուն ժողովի մը՝ որ ըստ գործոց Լուսաւոր չական եկեղեցւոյ Հայոց կայ ընդ վերատեսչութեամբ Ռուսիոյ Սբառին և Մբիստրայն, Հայաստանեայց եկեղեցւոյ ան կախութիւնը ջնջել:

ՅՕԴՈՒԱԾ 45.

Ի Սիւնհոգոսին Եջմիածնի լինի առանձին Պրօկուրօր կարգեալ 'ի կառավարիչ Սինկղտոսէն (սէնաթէն) յԱստիճանաւորաց՝ որք դիտեն զլեցուս Ռուսաց եւ Հայոց . նմա նշանակի ոռճիկ յԱրքունի գանձարանէն համեմատ իւրում պաշտաման :

ՅՕԴՈՒԱԾ 46.

Պրօկուրօրն Լուսաւորչական Հայոց Սիւնհոգոսին Եջմիածնի 'ի գործողութիւնս իւր վարի ընդհանրական կանոնադրութեամբք՝ որ վասն պարտաւորութեան Պրօկուրօրի: Սոյն սա ունի գհաւառ սար հակողութիւն 'ի վերայ դատաստանական եւ կարգադրական գործոց յառաջացելոց 'ի Սիւնհոգոսի անդ . եւ առաջիկայ գտանի յընտրութեամն Ծայրագոյն Պատրիարքին Եջմիածնի . զդատաստանական գործոց Պրօկուրօրն առաջի առնէ (Մբիստրայն իւստրէն) նախարարութեան իրաւանց, իսկ զայլոց գործոց՝ նախարարութեան ներքին գործոց : Նա նոյնպէս ըստ գործոցն Լուսաւորչական Հայոց Սիւնհոգոսին Եջմիածնի զիմէ առաջարկութեամբք եւ առ գլխաւոր կառավարիչն Վրաստանի Կովկասեան եւ յայնիոյս Կովկասու եղեալ նահանգաց :

Ահա կարգադրութիւն մալ որ իր քաղաքագիտական տրամադրութեամբը Պալամէնեսյի ոգին կը պախարակէ, և անոր՝ մեր եկեղեցւոյ օրինաց ու կանոնաց վրայ հիմնեալ չըլլալը յայտնապէս կը քարոզէ: Ո՞վէ այս պրօկուրօրը և ի՞նչ գործ ունի Հայաստանեայց Լուսաւորչական եկեղեցւոյ հոգեւոր վերին իշխանութեան քով, — պրօկուրօրը Ռուսիոյ տէրութեան աստիճանաւորներէն աշխարհական անձ մընէ՝ որ Հայոց ու Ռուսաց լեզուները պէտք է գիտնայ . ուրեմն կընայ օտարազգի ալ ըլլալ . նա՛ կը կարգի Ռուսիոյ տէրութեան Սէնաթէն, և արքունի գանձարանէն ոռճիկ կ'առնու . առ ի՞նչ . վասն զի նա պիտի գտնուի լու:

սաւորչական Հայոց Սիւնհոդոսին մէջ՝ « Առ ՚ի հաւասարաց
» պէս հայել ՚ի վերայ դատաստանական և կարգադրական
» գործոց յառաջացելոց ՚ի Սիւնհոդոսի անդ . և առաջի
» առնել զայնոսիկ ըստ գործոց նախարարութեանց իրաւ
» ւանց կամներքին գործոց և կամ գլխաւոր կառավարչի
» վրաստանի կովկասեան և յայնկոյս կովկասու եղեալ նաւ
» հանգաց » : Նա իրաւունք ունի ներկայ գանուիլ Ծայրաց
գոյն Պատրիարքին ընտրութեան, և իր ստորագրութեամբ
կը վաւերացընէ ուրիշներու հետ Լուսաւորչական Հայոց
Սիւնհոդոսի պատկանեալ դրամոց հաշիւները :

Բացատրութեան կարօտ է այս տրամադրութեանց բոլորովին հակառակ ըլլալը մեր սուրբ Եկեղեցւոյ կանոնաց
և կարգաց . և միթէ աչքի չի զարներ այսպիսի աստիճան
նաւորի մը՝ որուն մէկ ձեռքը Լուսաւորչական Եկեղեցւոյ
գերագոյն տեսչութեան հոգեւոր ժողովոյ գործոց մէջ է ,
և միւս ձեռքը Ռուսիոյ տէրութեան նախարարութեանց
կարկառեալ , թէ պաշտօնին և թէ քաղաքային վիճակին
նպատակը : Անցնինք ուրեմն միւս յօդուածոց քննութեան :

Պալաժէնեայի 4 դլուխը 17 յօդուածներով կը կարգադրէ
ըստ Ռուսաստանի մէջ Հայոց Եկեղեցւոյ առաջնորդական
թէմերը , և թէմակալ առաջնորդաց ընտրութեան Եղանակը ,
պարտաւորութիւններն ու Ս. Էջմիածնի հետ ունենալու
յարաբերութիւնները :

Այս կարգադրութեան մէջ նշանաւոր կը հանդիսանայ
Հայաստանեայց Եկեղեցւոյ օրինաց և կարգաց ընդդիմա
մարտ հակառակութեամբ՝ Տ7 յօդուածը .

ՅՈՒՌԱԾԾ 57.

Զթէմակալ Առաջնորդս Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ ՚ի
Ռուսաստան նշանակէ ԹԱԴԱԻՈՐ ԿԱՅՍԵՐՆ յԵկեղեցական աստի
ճանաւորաց այսր դաւանութեան : Նոքա կարգին ևւ արձակին
Բարձրագոյն Հրովարտակօք : Ի մտանել նոցա ՚ի պաշտօն երդնուն
վասն հաւատարիմ հպատակութեան ևւ ծառայութեան .

որով ամենայն Հայոց կաթողիկոսը զրկուած է Ռուսաստա
նի Հայոց վիճակներուն առաջնորդները կարգելու և ար-

ձակելու իշխանութենէն որ ուղղակի իրեն կը պատկանի . վասն զի ամենայն Հայոց ընդհանրական կաթողիկոսը միան դամայն և Ծայրագոյն Պատրիարք է , և դոնէ իրեւ Պատրիարք Ռուսիաքնակ Հայկազանց ; իրաւունք ունի Ռուսիոյ Հայոց թէմակալ առաջնորդները կարգելու և արձակելու , ինչպէս կոստանդնուպօլսոյ Պատրիարքը կը կարգէ և կարձակէ Տաճկաստանի Հայոց թէմակալ առաջնորդները : Այս իրաւանց՝ մեր Սուրբ Եկեղեցւոյ օրէնքը միայն մէկ չափաւորիչ պարագայ մը կ'ընդունի , այն է ժողովրդեան ընտրութիւնն ու առաջարկութիւնը , որով Առաջնորդը կ'ընծայի Պատրիարքի հաւանութեան ու հաստատութեան . օտար անձն կամ իշխանութիւն ընալ իրաւունք չունի առաջնորդական ընտրութեան միջամտութիւն ընելու և Եկեղեցին և միանդամայն անոր գերագոյն Հովիւը իրենց նըւիրական իրաւունքն կապտելու : Ռուսիոյ տէրութիւնը Ռուսաստանի Հայկացն առաջնորդութեանց նկատմամբ՝ այնչափ միայն իրաւունք ունի՝ որչափ Յամանեան տէրութիւնը իր երկրին մէջ : այսինքն ճանաչել ընտրուած առաջնորդը , և անոր քաղաքական մասին պակասութեան մէջ դանուած ժամանակ՝ փոփոխութիւնն առաջարկել Ծայրագոյն Պատրիարքին :

Վեցերորդ գլուխը բաղմաթիւ յօդուածներով Հայաստանեայց Մենաստանները նորանոր կարգաց և կանոնաց կ'ենթարկէ , որոնց մէջ նշանաւոր է աղդային Եկեղեցական կանոնաց դէմ հակառակութեամբ 91 յօդուածը որ է .

ՅՈՒՈՒԱԾ 91.


Ամենայն շարժական կայք թողեալք զկնի մահուան վանականին՝ պատկանին մենաստանի նորին , եթէ չիցէ նորա արարեալ զկտակ եւ չունիցի զօրինաւոր ժառանգ :

Մեր Եկեղեցին միայնացելոց գոյից և ընչից ուրիշ ժառանգ չը ճանչնար այլ միայն անոր միայնացած Մենաստանը (տես Միսիթար Գօշ ՚ի Դատաստանագիրս) : Աշխարհի ամեն վայելմանց հրաժարական տուող և ազգային յար-

կի մը տակ աղգին հացովը ապրող ու մեռնող վանականի մը օտար ժառանգ ընդունելու տրամադրութիւնը ուրիշ հետեւանք չ'ունենար, այլ միայնացելոց սրտին մէջ ընչափարութեան և հարստութեան ոէր արծործել, և աղգային հաստատութիւնները զրկել աղգայինոց նուերովը զոյացած հարստութենէ. վերջապէս աղղային Մենաստանական հաստատութիւնները տկարացնելու կործանելը որպէս զի Ազգը անռուցմէ ակնկալած բարյական և ուսումնական լրւաւութութենէն զրկուի.

Պալաժէնեայի մնացած զլուխներուն մէջ ալ ոչինչ պակաս վնասակար յօդուածներ կը տեսնուին, որոնցմէ մասնաւոր յիշատութեան արժանի կը ճանչենք 118 յօդուածը, որուն զօրութեամբ աղգային հաստատութեան մը՝ ինպաստ նոյն խոկ աղգայիններէն նուէր հաւաքելու համար, աղգային առաջնորդական իշխանութենէն և երրեմն նաև ծայրագոյն Հոդեւոր իշխանութենէն հրաման առնելէն զատ՝ որևէ ան հարժանաւոր կառավարութենէն ալ թայլտուութիւն ստանալ հարկէ. Նաև 129 և 130 յօդուածները՝ որք ժողովրդեան վրայ բուռք կը սահմաննեն առ քահանայս վճարելի վաճակատարելց զհոգեւոր պէտո նոյին. և այս տուրքերուն կարգնէ և վասն մկրտութեան երախայի սահմաննեալ քսան կօպէկ արծաթի և տուրքը, զոր թէպէտ չը վճարող ներուն քահանայն իրաւունք չ'ունի Մկրտութիւնը զանալ, սակայն Հոդեւոր ատենին դիմելով մարմնաւոր իշխանութեան միջոցաւ կարո՛ղէ սահմանջել զլացողէն. Մեր եկեղեցւոյ կարգաց և օրինաց հմուտ բարեպաշտօն աղգայնոց կը ձգենք դատել թէ Ս. Մկրտութեան խորհուրդը մատակարարելու համար բուռք սահմանող Պալաժէնեան ի՞նչ աստիճան իրաւունք կ'ունենայ ինքզինք հայստաննեայց եկեղեցւոյ բնիկ օրինաց և կանոնաց վրամակութական գրակելու.

Ահա ասոնք են գլխաւոր տրամադրութիւններն այն ու ըինաց՝ որով Հայաստանեայց եկեղեցի Ամենապահապահական



գերագոյն իշխանութիւնը պարտաւորեալէ վարիլ, և որ
«1836ին Ռուսիոյ կայսեր հրովարտակաւ, հաստատուած օրէն
Ռուսաստանի օրինաց մատենին մէջ զետեղուած է, և ամեն
մէկ յօդուածը նոյն զօրութիւնն ունի ի՞նչ որ Օրինագրոց
միւս յօդուածները »։ Ուրեմն սոյն կարգադրութիւնն է
ճշգրիտ պատկեր ամենայն Հայոց կաթողիկոսութեան ար-
դի վիճակին, զոր ստուգելու հրաւիրեց մեզ պատկառելի
ժողովոյդ վստահութիւնը, և զոր թախծութեամբ սրտի ջեղ
ներկայացնելով կ'անցնինք մեր պաշտօնին միւս կէտերուն։

ՄԱՍՆ Բ.

Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրութեան արդի եղա-
նակը ո՞րն է և համաձայն է թէ չէ Ազգային եկեղեցւոյ ի-
րաւանց, օրինաց և սովորութեանց։

Զայս քննելու համար Յանձնաժողովը դարձեալ կը
պարտաւորի 1836ի կարգադրութիւնը ձեռք առնուլ, ա-
նոր որոշած ընտրական տրամադրութիւնները տեսնել,
ստուգել նաեւ թէ նոյն կարգադրութեան հաստատու-
թիւնը ըստ ոմանց «աղօթիւք և օրհնութեամբ» և ըստ այ-
լոց «սրտմտութեամբ և յո՛չ կամաց» ընդունող Յուլիանէս
կարրեցի կաթողիկոսէն սկսեալ վերջին 30 տարիներու
մէջ իրարույածորդող Ներսէս և Մատթէոս երջանկայիշա-
տակ կաթողիկոսունք ի՞նչպէս ընտրուեր են։

Ա. Նախ Պալաժէնեան կաթողիկոսական ընտրութիւնը
ինն յօդուածոց մէջ պարունակեր է 115ն մինչեւ 19 ամ-
բողջ, զոր աստ կ'օրինակենք։

ՅՈՒՈՒԱԾ 11.

Ծայրագոյն Պատրիարքն Էջմիածնի ընտրի յողջոյն ազգէ Լու-
սաւորչական Հայոց ըստ կարգին սահմանելոյ առ այս։

ՅՈՒՈՒԱԾ 12.

Ի դատարկանալ տեղւոյ Ծայրագոյն Պատրիարք կաթուղիկո-
սին ամենայն Հայոց, Լուսաւորչական Սիւնհողոսն Էջմիածնի ա-
ռաքէ զծանուցողական նամակս յամենայն վիճակս Լուսաւորչա-

կան Հայոց, որք ենն՝ թէ 'ի Ուսասաստան, եւ թէ արտաքոյ սահմանաց նորին, նաեւ նշանակէ զտարեւոր միջոց առ ընտրութիւն նորոյ Պատրիարքի:

ՅՕԴՈՒԱԾ 13.

Եւրաքանչիւր վիճակ Լուսաւորչական Հայոց առ ընտրութիւն Պատրիարքի նշանակէ գերկուս պատգամաւորս՝ դէպուտատ՝ զի՞ Եկեղեցական եւ զի՞ աշխարհական։ Պատգամաւորն Եկեղեցական պարտի լինել կամ նոյն ինքն թէմակալ Առաջնորդն, կամ այլ ոք Եկեղեցական նշանակեալ 'ի նմանէ։ իսկ աշխարհական պատգամաւորն ընտրի յամենայն իշխանաւորաց, 'ի հարիւրապետաց յիւղբաշեաց 'ի մէլիքաց եւ յայլոց պատուաւոր աշխարհական անդամոց Լուսաւորչական Հայոց Եկեղեցւոյ՝ որոց են իւրաւունք ընտրութեան ըստ վաղեմի ծիսի այսր Եկեղեցւոյ։

ՅՕԴՈՒԱԾ 14.

Այսոքիկ ընտրեալ պատգամաւորք եթէ չկարասցին ներկայանալ անձամբ 'ի վանս Եջմիածնի ցնշանակեալ ժամանակն վասն ընտրութեան Պատրիարքի, ունին իրաւուն յայտնել գրութեամբք զդատողութիւն իւրեանց՝ հասուցանելով զայն 'ի Սիւնհոդոսն Եջմիածնի։

ՅՕԴՈՒԱԾ 15.

Բայց 'ի պատգամաւորաց (գէպուտատ) մասնակցին յընտրութեան Պատրիարքի ամենայն Անդամք Լուսաւորչական Հայոց Սիւնհոդոսին Եջմիածնի, եւ եօթն երիցագոյն Եպիսկոպոսունք՝ որք յայնժամ գտանիցին յԵջմիածն։ իսկ 'ի գիպուտածո պակասութեան Եպիսկոպոսաց, զայն թիւ լնուն երիցագոյն վարդապետք տեղւոյն։

ՅՕԴՈՒԱԾ 16.

Նոյն ընտրութիւնն յառաջանայ յԵջմիածն 'ի Մայր Եկեղեցւոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին ճիշտ պահպանութեամբ ծիսից սահմանագրելոց 'ի Լուսաւորչական Եկեղեցին Հայոց առ այս։

ՅՕԴՈՒԱԾ 17.

Զկնի հաւաքման ձայնից բոլոր ժողովականացն եւ հասու լինելոյ գրաւոր դատողութեանցն հասելոց 'ի Սիւնհոդոսն ըստ զօրութեան 44 յօդուածոյն, չորեքին աւագագոյնք ըստ առաւելութեան ձայնիցն տուելոց 'ի նպաստ իւրեանց ճանաչին ունողք իւրաւանց ընտրեալ լինելոց 'ի Կանդիտատ։ իսկ 'ի գիպուտածո հաւ-

ւասարութեան ձայնի, վիճակն որոշեսցէ՝ թէ ո՞ք պարտին համարիլ աւագագոյնք՝ 'ի նոցունց բոլոր ժողովականք առնեն ընտրութիւն երկուց կանդիտատաց 'ի պաշտօն Ծայրագոյն Պատրիարքին

ՅՈՒՆԻՍ. 18.

Զինի այսր ընտրութեան՝ ժողովն առաքէ զերիս պատգամաւորս յանդամոց խւրոց առ գլխաւոր կառավարիչն Վրաստանի, կովկասեան եւ յանկոյս կովկասու եղեալ նահանգաց՝ որ յաղագս երկուց կանդիտատաց ընտրելոց առաջի առնէ ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ 'ի բարեհաճութիւն, ընդ ձեռն նախարարութեան ներքին դործոց :

ՅՈՒՆԻՍ. 19.

ԹԱԳԱԽՈՐ ԿԱՅՍԵՐՆ Նշանակեալ զծայրագոյն Պատրիարքն էջմիածնի զկաթուղիկոմն Հայկազանց՝ ամենողորմածաբար շնորհէ նմա զառանձին Հրովարտակ վասն այսր աստիճանի, եւ հրամայէ զկնի երդնլոյն լինել հաւատարիմ առ գահն ամենայն Ռուսաց, կատարել զօծումն նորա ըստ վաղեմնի ծխի եւ սովորութեան Կուսառորչական Եկեղեցւոյն Հայոց :

Այս տրամադրութիւններէն յայտնի կը տեսնուի որ Ընդհանուր Հայոց Աղջը չէ՝ կարող ընտրել իր Հոգեւոր Տէրը, իր Եկեղեցւոյ Հովուապետն ու Հայրապետը, այլ նա՛ միայն ընտրելիներ կը ցուցընէ, և համայն ազգին մի այն $\frac{1}{8}$ մասին վրայ տիրող կառավարութեան վեհապետը՝ Ռուսաց Վեհափառ կայսրը՝ կ'ընտրէ զկաթողիկոմն Հայոց։ Առաջին առօրինակութանքնեան :

Վերսիշեալ ընտրելիները որոշելու համար Աղջին զանազան երկիրներու մէջ ունեցած առաջնորդական վիճակներէն երկերկու պատգամաւոր կ'ուղուի ընտրելեաց ընտրող ժողովին որ պարտաւորեալ է գումարիլ Ս. էջմիածնի տաճարին մէջ հանգուցեալ Հայրապետին մահուանէն տարի մը ետքը՝ ո՛չ աւելի կանուխ, և ո՛չ ուշ։ Երկութիւն անդւնէան :

Յիշեալ պատգամաւորներուն մէկը Եկեղեցական պիտի ըլլայ, միւսը աշխարհական։ առաջինը կամ նոյն ինքն վեճակին Առաջնորդն է՝ կամ այլ ոք Եկեղեցական նշանակեալ

՚ի նմաննէ մխայնակ , մինչդեռ երկրորդին ընտրութեան՝ վեճակին բոլոր աշխարհական իշխանաւորները հաղիւ բաւական կը համարուին : Երբոր աղօքինաւորնեին :

Սոյն պատգամաւորները կամ անձամբ պիտի երթան էջմիածին և կամ դրով պիտի դրկեն իրենց դատողութիւնը կամ քուէն . և զ՞զ պիտի գանեն անդ ընտրելեաց ընտրող ժողով կաղմելու համար : — Սինօդին բոլոր անդամները և եօթն երիցադոյն եպիսկոպոսունք կամ վարդապետք . ու բոլ սոյն ժողովը կը քաղկանայ՝ ո՛րչափ աշխարհականներէ՝ նոյնափ և 13 ալ աւելի եկեղեցականներէ : Զերբոր աղօքինաւորնեին :

Այս ժողովին մէջ ներկայ ժողովականք քուէարկութիւն կ'ընեն , և բացակայից նամակաւ եկած քուէներուն հետ անոնց ալ քուէները միանալով քուէհամար կ'ըլլայ . որով ամենէն շատ քուէ ստացող առաջին չորս անունները ցուցակի մը մէջ կը նշանակուին , առանց ուշ դնելու թէ քըւէից բացարձակ առաւելութիւն ստացող կայ մէջերմին թէ ոչ , անոնց ամենն ալ համահաւասար իրաւամբ ճանաչին ունողք իրաւանց ընտրեալ լինելոյ՝ — ի՞նչ — դարձեալ ընտրելի : Հիսչերոր աղօքինաւորնեին :

Ահա այս չորս ընտրելիներուն մէջէն բոլոր ներկայ ժողովականք (բացակայ դատնուողներուն խօսքը չկայ) ընտրութիւն կ'ընեն երկու անձի (ի՞նչ կերպով , այն ալ որոշ դրուած չէ) , որ կը կոչուին կաթողիկոսական կանդիտատք այսինքն ընտրելիք . և այս վերջին երկուքին մէջէն վելայսրը և բարեհաճութեամբ կը նշանակէ զծայրագոյն „Պատրիարքն էջմիածնի , զեաթողիկոսն Հայկաղանց , և „ամենողորմածաբար շնորհէ նմա զառանձին հրովարտակ „վասն այսր ԱՍՏԻՃԱՆԻ (Ուուսիոյ կայսրը Հայոց Եկեղեցւոյ հայրապետին կաթողիկոսութեան եկեղեցական աստիճանի հրովարտակ կու տայ) և հրամայէ զնէ երդնւան լինել հաւ „ւատարիմ առ Գահն Ուուսաց , կատարել զօծումն Ծայ „բագոյն Պատրիարքին ” : Վերջին և ծայրագոյն աղօքինաւորնեին :

Բ. Պալաժէնեայի հաստատութիւնը՝ ինչպէս որ արդէն յիշեցինք՝ կարբեցի Յովհաննէս կաթողիկոսին օրովնէ, բայց Ա. Էջմիածնի Ռուսաց Տէրութեան ձեռքն անցնիլը անոր կաթողիկոս ըլլալէն առաջէ։ ուստի կարբեցւոյն ալ կաթողիկոս ընտրուելու պարագաները գիտնալ անօգուտ չէ Պատկառելի ժողովոյդ։

1842 թուին Մոսկուա տպուած « Բարձրագոյն Հրովարտակը և Արձանագրութիւնք վերաբերեալք առ Եկեղեցիս դաւանութեան Լուսաւորչական Հայոց որ ՚ի Ռուսաստան « անուն գրքին մէջ կը կարդանք թէ 1831 թուին Եփրեմ կաթողիկոսն հրաժարելով, Ռուսաց Վ. Նիկողայոս կայսրը հրաման գրեր է՝ որ Ա. Էջմիածնի Աթոռին մօտակայ վիճակները դանուող բարձրաստիճան Հայ Եկեղեցականք՝ Էջմիածնի սինողին հետ միաբանելով ընդ Նախադահութեամբ Եփրեմ կաթողիկոսի, Երկու կանդիտատ կամ կաթողիկոսացու ընտրեն և անոնց անունները մերձակայ թէմից Եկեղեցականներուն, Մելիքներուն, Խւզպաշիներուն և ուրիշ արժանաւոր անձանց ծանուցանելով հասկընան թէ անոնցմէ ո՞րը կուզեն կաթողիկոս։ անոնք ալ այնպէս ըրեր են, այսինքն Երկու կանդիտատ ընտրեր են, տեղակալ Մարտիրոս Արքեպիսկոպոսն ու Վրաստանայ առաջնորդ կարբեցի Յովհաննէս Եպիսկոպոսը։ Բայց Երբոր ասոնց անունը մօտակայ թէմերու Եկեղեցականաց, Մելիքաց, Խւզպաշեաց և այլոց ժողովրդականաց ծանուցեր են, անոնք սինօդականաց և բարձրաստիճան Եպիսկոպոսաց ընարած Երկու կաթողիկոսացուներուն Երկրորդը՝ այն է Յովհաննէս կարբեցին ուզեր են, ուստի Ռուսաց Վ. Կայսրն ալ վերջիններուն ուզածը հաստատեր է ՚ի կաթողիկոսութիւն։

Ահաւասիկ այս Եղելութիւնը պատմող կայսերական հրովարտակին բուն խօսքերը, որ վերոյիշեալ գրքին 405 և 406 Երեսներուն մէջ կը տեսնուի։

“ . . . Խրազդաց լեալ ՚ի ծանօթութեանց մերս Գեներալ Թէլթմարշալ Գրաֆ Պասկեւիչ Երեւանու, թէ զօրացեալ

տկարութիւնք բարձրաստիճան Պատրիարքին Եփրեմայ
բոլորվին զրկեն զնա 'ի կարողութենէ կատարելց զերկուս
գլխաւոր պարտաւորութիւնս Պատրիարքական , այն է Օբհաւը
զՄիւնան և Յեւնադրեւ վեպէսկոպոս , ոյր վասն և տեսանէ նա զինքն
պարտաւորեալ մերկանալյանձնէ զբարձր աստիճանս զայս ,
մեք թէ և ցաւակցութեամբ իմն յօժարամիտ գոլով առ այն ,
հրամայեցաք բարձրընտիր եկեղեցական աստիճանաւորաց
եղելոց 'ի մերձակայ կողմանս Հայոց՝ ու հարէ նու հերուսն
էջտանէ , միաւորեալ ընդ Սիւնհոգոսին Էջմիածնի , գահա
գլուխ ունելով ինքեանց զվեհաստիճանն Եփրեմ , ըստ սահմա
նադրութեան վաղմէ և ճագուր կանոնաց Հայուստանեաց Եկեղեցաց , ընտրել
զերկուս կանդիտատս 'ի Պատրիարքութիւն , և մասուցեալ
'ի գիտութիւն զանուանս ընտրելոցն եկեղեցականաց մեր
ձակայ թեմից , Պատուարժան Մելիքաց , իւզբաշիաց և
այլց արժանաւոր անձանց պատուարժան ազգին Հայոց ,
ծանուցանել մեղ թէ զովոքյերկուց ընտրեալ կանդիտա
տաց Սիւնհոգոսին ցանկան տեսանել գլուխ եկեղեցւոց :
Համաձայն մերս կամաց , մեծահանդէս ժողովն Եկեղեցա
կանաց՝ ընդ գահագլխութեամբ վեհափառ Պատրիարքին
Եփրեմայ 'ի 16 Մարտի ընտրեաց զկանդիտատս յաթու
Պատրիարքութեան Էջմիածնի , զջեղակալն Պատրիարքին
զԱրքեպիսկոպոսն Մարտիրոս , և զԱրքեպիսկոպոսն Վրաս
տանի զՅովհաննէս : Համեմատեալ զայս նշանադրութիւն
կանդիտատաց ընդ ցանկութեանց կամաց նամակաւ մատու
ցելոց յԵկեղեցականաց մերձակայ թէմից Էջմիածնի , 'ի
Պատուարժան Մելիքաց , յիւզբաշիաց և այլոց արժանաւոր
անձանց պատուարժան ազգին Հայոց , մեք բարձրհաճեցաք
հաստատելյաստիճան Պատրիարքի Էջմիածնի և կաթուղիւ
կոսի համօրէն Հայոց զԱրքեպիսկոպոսն Յովհաննէս , և հրա
մանազրեմք վեհափառ Պատրիարքին Եփրեմայ յարդարել
և կատարել զօդումն և զձեռնադրութիւն սորին արժանաւ
վայել հանդիսակատարութեամբ և իսկական պահպանու
թեամբ համօրէն վաղեմի սահմանադրութեանց և աւան
դութեանց , որք հաստատեալ կան յաղագու այսր նախամեն
ծար Եկեղեցական հանդիսի :

Զը գիտեմք թէ կարեցւոյն ընտրութեան ժամանակ չաճկաստանի Հայոց կեղրոնական Պատրիարքական իշխանութեան իմաց տրուե՞ր է, և ի՞նչ կերպով, և ասկէց ալ ի՞նչ պատասխան արուեր է.

Բայց անոր յաջորդ երջանկայիշատակ Ներսէսի ընտրութեան ժամանակ Ս. Էջմիածնի Միաբանութեան կողմէն պաշտօնական կերպիւ իմաց տրուած ըլլալը գիտեմք Ազգ, Պատրիարքարանին, և հրաւեր ալ եղած է մամնակյլն ոյն ընտրութեան, Բայց ժամանակին Պատրիարքարան գումարուաղ լնդհանուր Ժողովոյ անդամք, մեծ մասամբ սեղանաւորք Յամանեան Տէրութեան, պատասխան տուեր են թէ « Տաճկաստանի Հայք կատարեալ վատահութիւն ունին Սուրբ Էջմիածնի Միաբանութեան վրայ, և թէ անոր ընտրածը իրենց ալ կատարելապէս ընդունելի է » , ուստի չ'են ամեննեւին մասնակցեր ընտրական դործողութեանց, հետեւաբար Ս. Էջմիածնին գումարուաղ ուրիշ երկիր մերազնէից պատգամաւորները միաձայն Ներսէսն ընտրեր են, և Ռուսաց վ. Կայսրն ալ ընդուներ և հաստատեր է, ինչպէս որ վերոյիշեալ գրքին ԱՊ Երեսը տեսնուած կայսերական հրովարտակին հետեւեալ խոռքերէն կը հառկցուի :

« Ծանիցէ ամենայն ազգ Հայոց, թէ զիջեալ 'ի միաշունչ փափաք սրտից նոցա, յայտնի երեւեալ հանդիսիւ մեծաւ յէջմիածնին 'ի ԱՇ աւուր ապրիլի 1843 ամի, մեք հաստատեմք զԱրհի Եպիսկոպոսն Ներսէս յաստիճան Պատրիարքի Էջմիածնի և կաթողիկոսի ամենայն Հայոց :

Ահա հոս յայտնի կը տեսնուի որ Ներսէսի ընտրութիւնը թէւ Պալամէնեայի հաստատութենէն ետքն է, բայց անոր տրամադրութեանց բոլորովին հակառակ կերպով կատարուած է, այսինքն Ս. Էջմիածնին գումարեալ պատգամաւորները՝ չէ թէ երկու կանդիսատ ընտրեր են՝ ըստ Պալամէնեայի, այլ միաձայն Ներսէսն ուզեր են, և կայսրն ալ Ազգին կամքը յարդելով հաստատեր է զայն :

Ներսէսի վախճանէն ետեւ Մատթէոս Արքեպիսկոպոս նստաւ յաթոռ կաթողիկոսութեան 1858 ին :

Ասոր ընտրութիւնը մեր օրով և Տաճկաստանի Հայոց մաս-

նակցութեամբն եղած ըլլալով, ամեն պարագայիւք ծանօթէ մեզ:

Ս. Էջմիածնայ միաբանութիւնը ողաշտօնական գրով իւ մացուցեր էր կ. Պօլսոյ Պատրիարքարանին Ներսէսի վախճանումը, և Պալաժէսեայի տրամադրութեան համեմատ խընդըրեր էր՝ ինչպէս այս անդամն թէ կ. Պօլսոյ Հայոց և թէ Տաճկաստանի առաջնորդական վիճակաց կողմանէ պատգամաւորներ զրկել ՚ի Ս. Էջմիածին, որպէս զի նոր կաթուղիկոսի ընտրութեանը մասնակցին:

Ժամանակին Հոգեւոր և Գերագոյն ըսուած աղգային ժողովներն այն գիրերը կարդալով համաձայնութեամբ ու ըոշեր են գրել Ս. Էջմիածնայ միաբանութեան թէ իրենք Օմանեան տէրութեան հաստատած արտօնութեամբ.ք Տաճկաստանի համար Հայոց Անդամութականուաց և Անդամութականուաց Ներկայացնական ըլլալը Հարկ չկար բոլոր առաջնորդական թէմերէն զատ զատ պատգամաւորներ խնդրելու, այլ պարզապէս Տաճկաստանի Եպիսկոպոսներէն հինգ ընտրելի ցուցընելով անոնց մէջէն ո՞րն որ կաթողիկոս ընտրուէր՝ Տաճկաստանի Հայոց ընդունելի և հաճայ ըլլալը իմացընել: Իսկ Ս. Էջմիածին ըլլալիք վերջին ընտրութեան մէջ Տաճկաստանի Հայերը ներկայացնելու և այն ժամանակի քառասուն և հինգ վիճակաց կողմանէ քուէ տալու համար՝ յիշեալ Հոգեւոր և Գերագոյն ժողովները գիր զրեր են կովկասեան փոխարքայի տեղակալ Հայագդի Վասիլիքէրուտով զօրապետին և խընդըրեր են որ կամ էր աղոթութառական հրամանաբրով և կամ իր կողմանէ մէկը Ս. Էջմիածին զրկելով իրենց ցուցըցած հինգ ընտրել եաց մէկը՝ ո՞րն որ էրն համայ նուուկ՝ ընդունել որպէս Բայց այս գիրը Տփիսիս չի հասած Բէհրուտով կը վախճանի և գիրը կէս ճաներէն ետ կը գառնայ: Ասոր վրայ յիշեալ Հոգեւոր և Գերագոյն ժողովներն ուրիշ երկու Տփիսիսեցի աղգայնոց⁽¹⁾ կը գրեն և Տաճկաստանի համօրէն Հայոց փոխանորդ կը կարգեն, որք լիակատար իշխանութեամբ Ս. Էջմիածին կ'երթան, և երկու կաթուղիկոսացուներու վերջնական ընտրութեանը մասնակից կ'ըլլան իւ բաքանչիւրը քառասուն և

(1) Կուրկինազէկով և Խասք Յառանով:

հինգ կամ երկու.քը մէկէն իննսուն ձայն կամ քուէ ունեցալով՝ ի դիմաց քառասուն և հինգ առաջնորդական թէմոց Տաճկաստանի, և վերջապէս Ս. Մատթէոս Ս. Գէորգ Արք Եպիսկոպոսներն առաւելագոյն քուէ սուանալով, իրեւ վերջնական կանդիտատք կամ ընտրելիք՝ ըստ Պալաժէն եայի՝ անուննին Ռուսաց կայսեր բարեհաճութեանը կը ներկայացուի, և Ն. Վեհափառութիւնն ալ զՄատթէոս կը նշանակէ կաթողիկոս ամենայն Հայոց :

Ահաւասիկ վերոյիշեալ Հոգեւոր և Գերադոյն Ժողովոց կողմանէ առ Ս. Էջմիածնի Սինօդն և առ Բէհրուտով զօրապետն գրուած նամակներուն պատճէնը :

Պատճէն նամակի վասն ընտրութեան ընդհանրական կաթուղիկոսի որ գընեցաւ՝ ի Սուրբ Էջմիածնի ըստ որչման Ընդհանուր Ժողովոյն գումարելց ՚ի 14 Մարտ 1858.

Գերապատիւ եւ չնորհաշուք բարձր Տեղակալ Արարատեան Մայր Աթոռոյ սուրբ Էջմիածնի եւ ամենայն Սինօդական մէծարեալ Հարք :

Որովհետեւ յուղղափառ հաւասար քրիստոնէութեան ծնեալ, եւ հոգեբուղիս վարդապետութեամբ Սրբազնն Հարց մերոց մնեալ, յարգեմք զամենայն կանոնանոյա ամենայն մասամբ զգուշաւորութեան, եւ ճգնիմք արեամբ չափ չբերել առ նոսա արատ ինչ, յայն սակա իրեւ հաւատարիմ աւանդապահք՝ զառ ՚ի Սրբազնն Հայրապետաց եւ ՚ի նախնեաց մերոց զոր ինչ ունիմք, եւ զոր տեսեալ եւ լուեալ եմք ըստ հոգեւորին, անփոփոխ եւ անայլայլելի պահեալ եմք եւ փութեամք ՚ի նոյնութեան պահել յաւիտեան :

Ապաքէն ծանուցաւ մեզ լրութեան Ազգիս Տիրահրաւէր վուխումն յաստեացս գերերջանիկ եւ սրբազնասուրք Հայրապետին մերոյ եւ ծայրագոյն Քահանայապետին, որպէս եւ գրենիք մեզ երկիցս ցաւօք սրտի. եւ ըստ կանոնի խնդրեալ էք զհաճութիւն բազմագումար բնակչացս Տաճկաստանի ՚ի նորոգ ընտրութիւն արժանաւորի ուրուք, որ յաջորդեացէ ՚ի տեղի նորա ուստի եւ մեզ աստանօր ՚ի Մայրաքաղաքիս Հոգեւոր եւ Գերադոյն Ժողովականք՝ ՚ի խնդրանաց եւ ՚ի պատշաճ տեսութենէ բովանդակ ազգին՝ յարքունուստ հաստատեալ սեպհական արտօնութեամբք մերովք հաւաքեալք ՚ի մի որպէս արդարեւ ներկայացուցիչ ազգայնոց հո-

գեւորականաց եւ ժողովրդականաց եղելոց՝ ի սահմանի 0սմանեան պետութեան , եւ համահաճութեամբ դրեցաք զայս գիր յայտնեւ լով զխորհուրդս մեր :

Եւ արդ յառաջ քան զամենայն խնդիր է մեր ուխտիւք յերկնաւոր Քահանայապետէն մերմէ , զի ցուցցէ մեզ զարժանաւոր փեսայ անարաստ հարսին իւրում սրբոյ Եկեղեցւոյ 'ի գահակալութիւն այդմ Մայր Աթոռոյ ըստ հոգեւոր մասին , որ իցէ յուղափառ հաւասար անխոտոր վկայեալ , Կ սուրբ պաշտամանն եւ ՚ի կոչմանն ամենայն ջերմեռանդութեամբ եռամնդուն , ջատագով հայրենի աւանդից եւ ուղղութեան կարգաց եւ կանոնաց , երկիւղած եւ զգուշապահ ծխից եւ արարողութեանց Հայաստանեաց սուրբ Եկեղեցւոյ , մինչ ցայս վայր 'ի վարս երկնակրօն սրբութեան անբամբաս քաղաքավարեալ , Հօտին Քրիստոսի օրինակ բարի գանձն ընծայեալ , եւ միով բանիւ ասել , իսկաքանչ տիպ եւ նըմանութիւն ունիցի հիմնադրի Արարատեան Մայր Աթոռոյն մերոյ՝ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին եւ արժանաժառանդ յաջորդաց նորա , որք յեկեղեցական իրաւասութեանց եւ ՚ի կաթուղիկոսական անկախ արտօնութեանց եւ ոչ նշանախեցիւ չափ ինչ մի կորուսեալ են եւ կամ այլայլեալ ոչ յառաջ եւ ոչ յետոյ . եւ զզրկեալ ոք այժմ 'ի բարեմատնութեանց աստի եւ յանկախութենէ հոգեւոր իշխանութեան իւրոյ՝ ոչ ընկալցուք երբէք , եւ ոչ հաւան լիցուք հնազանդիլ 'ի հոգեւորս յայն վիճակ խոնարհեալ հոգեւորական իշխանաւորի :

Եւ ահա երկիւղած մտածութեամբ որոշեցաք յԱրժանապատիւ եպիսկոպոսաց ազգիս զհնդեսին զայսոսիկ . զԱմենապատիւ Պատրիարք մայրաքաղաքիս զտէր Յակոր սրբազնան արքեպիսկոպոսն . զնախկին Պատրիարք Տէր Մատթէոս արքեպիսկոպոս . ըզ Գէորգ եպիսկոպոս Պրուսայու , զԳրիգորիս եպիսկոպոս Կարնոյ եւ զՊօղոս եպիսկոպոս Զմիւռնիոյ : Եւ վասն հնդեցունցս այսոցիկ միօրինակ եւ համազօր ունելով հաճութիւն , 'ի քուէարկութեան անդ զոր ունիցիք առնել ըստ կանոնաց յընտրութեան անդ , հաճութիւն մեր լի բովանդակ համարեացի այսմ վամն որոյ եւ իցէ 'ի հնդեցունց աստի յաջողեալ ընտրութիւնն . եւ զնորին Արագնութիւն ծանիցուք անվրէպ Ամենապատիւ եւ Արժանընտիր յաջորդ բազմերախաչ Հօրն մերոյ Ա. Գրիգորի Լուսաւորչին , եւ գլուխ Հայաստանեայցս սուրբ Եկեղեցւոյ , եւ ծայրագոյն ընդհանուր Պատրիարք եւ Քահանայապետ բոլոր լրութեան ազգիս Հայոց :

Ապաքէն ըստ ձերոց գրութեանց 'ի 14 Ակադեմիերի անցելոյ

ամի՞ առ Սրբազնն Պատրիարք մեր եւ տէր , « Բարեհաճիլ այժմէն իսկ աղդել 'ի միտս անդախոց աղդային Գերագոյն ժողովոց հոգեւորականաց եւ քաղաքականաց Հայոց Կոստանդինուպոլսոյ » , եւ դէք իբրեւ արդարեւ գիտակք սահմանադրութեան կառավարութեանց հոգեւորականաց եւ ժողովրդականաց հայոց Տաճկաստանի , յանձնեցելոյ յակնաբեկլոյ բովանդակ աղդին յարքունուսս երկուց ժողովոց 'ի գործադրութիւն մերոց իրաւանց յընտրութիւն նորոյ Հայրապետի , 'ի կողմանէ լրութեան հոգեւորականաց եւ ժողովրդականաց Կոստանդինուպոլսոյ , նոյնպէս եւ 'ի կողմանէ հոգեւորականաց եւ ժողովրդականաց քառասուն եւ հոգիւ չափ առաջնորդութեանց եղելոց ընդ Պատրիարքութեամբ Կոստանդինուպոլսոյ յԱսիա եւ յԵլլագա (1) , զվախճանական դիտումն մեր 'ի պայծառութիւն եւ 'ի շինութիւն սրբոյ Հայաստանեաց եկեղեցւոյ յայտնապէս գրեալ , 'ի հաստատութիւն զիսկական կնիք ժողովոց գրոշմեցաք :

Ի կողմանէ հոգեւորականաց Կ.Պօլսոյ ,
և քառասուն և հինգ առաջնորդութեանց եղելոց յՅանինեան տէրութեան՝ Հոգեւոր ժողովականաց եղելոց .

(Կնէ + Հոգեւոր ժողովականաց)

Ի կողմանէ ժողովրդականաց Կ.Պօլսոյ ,
և քառասուն և հինգ առաջնորդութեանց եղելոց յՅանինեան տէրութեան՝ Աղդային ժողովս կնիքեցաք .

(Կնէ + Գ.Երաֆոյն ժողովականաց)

Ի Պատրիարքարան ամենայն Հայոց ,
որ 'ի Կոստանդինուպոլիս .

2 Ապրիլ 1858:

Պատճէն նամակի առ կնէաղ Վասիլ Օսէվիչ Պէպութով
վոխանորդ Փոխարքային Կովկասու Տէր Եէնէրալ Լէյթինանթ եւ
Ասպետ Կավալիէր Կնէաղ Վասիլ Օսէվիչ Պէպութով :

Խնդիր Օսմանեան տէրութեան հպատակ եղեալ աղդիս
Հայոց Գերագոյն ժողովին Կոստանդինուպոլսոյ , որ է
Հաստատեալ Կայսերական Հրամանաւ :

Ականաւորք եւ անուանիք Ազգիս , հաւաքեալ 'ի Գերագոյն
ժողովս , միաբան ընտրեցաք հինգ Եպիսկոպոսունս , որք են .

(1) Ա.Յահնիքն Բումելի :

1. Կ. Պօլսոյ այժմեան Պատրիարք Յակոբ Արքեպիսկոպոս .
2. Նախկին Պատրիարք Մատթէոս Արքեպիսկոպոսն .
3. Պրուսայի վիճակաւոր Գէորգ Արքեպիսկոպոսն .
4. Զմբանիոյ վիճակաւոր Պօղոս Արքեպիսկոպոսն .
5. Կարմոյ վիճակաւոր Գրիգորիոս Արքեպիսկոպոսն :

Զի ահա ըստ հրամանի Սինօդին Ս. Աթոռոյ էջմիածնի , գրեցաք զպատասխանին եւ սոյն խնդրագրով առաքեմք առ Զերդ պայծառափայլութիւն , զի ազգասիրական ոգւով ողորմեանջիք ընդունիլ զաղաչանս բոլոր Հայ հպատակացս Օսմանեան տէրութեան , եւ փոխանակ ամենեցունց յանձնեմք Զերդ կամացն , զի 'ի ժամանակի ընտրութեան Կաթողիկոսի , կամ հրամանազրով Զերդ ազգապետութեան , եւ կամ 'ի դիմաց Զեր զոմն առաքելով առ Ս. Աթոռն յայտնել զկամս Զերդ պայծառափայլութեան , մինն 'ի սոյն հնդիցն ո ոք եւ իցէ հաճելի . քանզի ընտրեալն 'ի ձէնջ ընդունելի է մեղ ամենեցունց . վամն զի չունիմք առաքել զոք 'ի կողմանէ մերմէ , ոչ հոգեւորական եւ ոչ մարմնաւորական . ամենայն կերպիւ յանձնեալ եմք առ Զերդ պայծառափայլութիւն : Ողջ լեր 'ի պարծանս եւ 'ի պայծառութիւն Աղջիս :

Անդամք

Աղջ · Հոգեւոր ժողովց
(Կնէ+)

Անդամք

Աղջ · Գերագոյն ժողովց
(Կնէ+)

'ի Կ. Պօլիս . Պատրիարքարան Հայոց .

2 Ապրիլ 1858:

Մատթէոս Կաթողիկոս վախճանեցաւ անցեալ տարի 0 ~ գոստոս ամսոյն 22ին : Երեք ամիս ետքը Նոյեմբեր 19ին՝ Կ. Պօլսոյ Աղջ · Պատրիարքարանը պաշտօնական գիրեր կուգան⁽¹⁾ Ս. Էջմիածնի Սինօդէն , որ վշտակի վեհափառին ցաւալի վախճանը ծանուցանելին ետեւ կը հրաւիրէ Կ. Պօլսոյ Հայոց Պատրիարքը հանդերձ կրօնական ժողովով մէկ Եկեղեցական պատգամաւոր զըկել 'ի Ս. Էջմիածնի , և Քաղաքական ժողովին ալ կը պատուիրէ մէկ աշխարհական պատգամաւոր ընտրել , և գաւառաբնակ ազգայնոց իմաց տալով՝ իւրաքանչիւր առաջնորդական թէմերէ երկերկու պատ-

(1) Նախակները Սեպտեմբեր 44 ին գրուած են , բայց Նոյեմբեր 19 ին հասած են 'ի Պատրիարքարան :

դամաւոր ընտրել տալ, որպէս զի, կ'ըսէ, բոլոր Հայաստանն եայց պատգամաւորները առաջիկայ Սեպտեմբեր 15—17ին Ս. Էջմիածին գումարուելով, ընտրեն զկաթողիկոսն ամենայն Հայոց համաձայն կարգաց և օրինաց Հայաստանեայց Լուսաւորչական Ս. Եկեղեցւոյ :

Ահաւասիկ Սինօդին նամակներուն բուն խօսքը.

« Փոյթ ունել ընտրել ՚ի միջոց եկեղեցականաց Հայոց քաղաքիդ մեծի զո՞մն պատգամաւոր, զոր և առաքել ց15 սեպտեմբեր 1866 ամի յաթոռս Ս. Էջմիածնի, առ ՚ի մասնակցիլ ընտրութեան նորոյ կաթողիկոսի, որ ունի լինել ՚ի մայր տաճարի նորին, ճիշտ պահպանութեամբ ամենայն ծէսէց և առջուննեանց կարգեցելոց առ այն կոնուսութեամբ եկեղեցւոյ մերոյ » :

Եւ հետեւեալը .

« Ի գալ ժամանել բոլորից պատգամաւորաց՝ եկեղեցականաց և աշխարհականաց, և կամ յետ ստանալոյ յամենից ՚ի նորունց զղ բաւոր պատասխանիս, ունի կայանալ ընտրութիւնն անմիջապէս ՚ի 17 սեպտեմբեր ՚ի Տաճարի Ս. Էջմիածնի՝ ըստ նախասահման կարգին՝ համայստն ըստ ամենայն ծէսէց և առանդութեամբ եկեղեցւոյ մերոյ » :

Այս վաւերական տեղեկութիւններէն յայտնի կը տեսնուի որ Ս. Էջմիածին Ռուսաց կայսերութեան երկիր ըւլալէն ՚ի վեր՝ երեք անգամ կաթողիկոսի ընտրութիւն եղած է, և թէպէտ Ս. Էջմիածնի միաբանութիւնը ակամայ Պալաժէնեայի տրամադրութեանց համեմատ վարուելու պարտաւորուած է միշտ, բայց և այնպէս Ներսէսի և Մատթէոսի ընտրութիւնն ըստ այնց չէ կատարուած, այսօր ալ դարձեալ Ս. Էջմիածնի միաբանութիւնը նոյն կանոնաց համեմատ վարուելու պարտաւորեալ է, թէ և իր պաշտօնական նամակը Պալաժէնեայի յիշատակութիւն չըներ, այլ ըստ ամենայն համայստն ծէսէց և առանդութեամբ մեր եկեղեցւոյ վարուել կ'առաջարկէ :

Ցեմնենք ուրեմն ո՞րն է մեր Եկեղեցւոյ ընդհանուր կանոնը կամ աւանդական սովորութիւնը կաթողիկոսական ընտրութեան մասին :

Ազգային եկեղեցին՝ եկեղեցական նուիրապետութեան և ընդհանրապէս եկեղեցական ամեն տեսակ բարեկարգութեան վերաբերեալ կանոնաց և սահմանադրութեանց հետ հարկաւ կաթողիկոսական ընտրութեան վրայ աշխանաւոր կանոնադրութիւն ունեցած է՝ 'ի նախնեաց, 'ի հայրապետաց և յընդհանրական ժողովոց սահմանեալ բայց ազգային թանկադին հնութեան մեծ մասին կորստեանը հետ՝ Ազգը սոյն կանոնադրութեան ալ կորուստը ողբարուդժբաղդութեան մէջ է այսօր, այնպէս որ կաթողիկոսական ընտրութեան վրայ մեր եկեղեցւոյ օրէնքը և մեր նախնեաց կարգադրութիւնները գանել ուղղող՝ կը պարտաւորի ազգային պատմութեան հատուկոտոր մնացորդացը դիմել, և անոնց ծաղկաքաղովը բաւականանալ:

Կաթողիկոսական Յանձնաժողովս սոյն կէտին վրայ Ազգային մատենադրութեանց հետազօտութիւնը ընելով, բոլոր պատմական անցից ընդհանուր տեսութեամբ սա՛ եղակացութեան հասաւ որ,

Հայաստանեաց եկեղեցւոյ մէջ,

Ազգային Եկեղեցական նուիրապետութեան գլուխ, Ազգին Հոգեւոր աէրնու Հովիւը, մէկ բառով Ազգին ընդհանրական Հայրապետը, աղջովն կ'ընտրուի, այսինքն համայն Ազգէն և Թայն Ազգէն :

Ազգային պատմութիւնը կը ցուցընէ որ Ազգին ամեն կարդի և ամեն աստիճանի անձինք՝ լուսաւորչական Եկեղեցւոյ անդամը ըլլալու իրաւամք կաթողիկոսական ընտրութեան մասնակից եղած են, Եկեղեցական կարգէն Եպիսկոպոսունք և Քահանայք, Սարկաւագք և գովիրք ամբողջ քաղաքային վիճակի մէջ ալ Թագաւոր, Նախարար, Խշիան, սոսկական, աղքատ, հարուստ, մեծ և փոքր, ամեն կարդի ազգայինք իրաւունք ունեցած են Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրութեան մէջ։ Այս իրաւանց արգելք ըլլալու միակ պարագայ՝ Եկեղեցւոյ փարախէն դպրու դանուի լըն եղած է։ Այն որ Եկեղեցւոյ մէջ է, և չէ մերժուած, և հասակի կամ ընկերական վիճակի նկատմամբ քաղաքականապէս անբաւական չէ, Եկեղեցւոյ գլխոյն՝ Հասարաւ

կաց Հօր ընտրութեան մասնակցելու իրաւունք կը վայելէ : Պատմութիւնը կը ցուցնէ նաև որ մեր Ազգին մէջ կաթողիկոսական ընտրութեան մասին երբէք օտարի միջամտութիւն մտադիւր ընդունուած չէ՝, և բնաւ տեղ մը ազգային կաթողիկոսի ընտրութեան վաւերացում յիշատակուած չիկայ . կ'երեւի որ մեր նախնիք այս պարագային և ո՛չ իսկ դադարին ունեցած են :

Մեր Ազգին մէջ, Ազգ. Եկեղեցականք և քաղաքայինք մի և նոյն Եկեղեցւոյ անդամ, և 'ի Քրիստոս Յիսուս Եղբայր ճանչնալով զիրեար, Ազգային Հայրապետին ընտրութեան մէջ վիճակի խորողութեան սկզբունք երբէք ընդունած չեն : Ամեն կարգի անձինք սոյն ընտրութեան մասնակցեր են, ո՛չ խառն 'ի խուռն անշուշտ, այլ իւրաքանչիւրն իր ձեռնհասութեան սահմանին մէջ շարժելով, բայց ամենն ալ գործելով . այնպէս որ, կաթողիկոսունք ընտրուեր են միշտ քրիստոնէական Արեւելեան և նախնական պարզ և մաքուր կանոններով : Եկեղեցականք ընտրութեան գործողութիւնները կանխաւ օրինաւորութեան շատղին մէջ ուղղելով իրենց պաշտօնը կատարած են, նուիրապետութեան այն գերագոյն աստիճանին՝ ամենայն Հայոց կաթողիկոսութեան պաշտօնին արժանաւորագոյն անձինքները ցոյց տալով ժողովը վըրդեան, որով նոյն պաշտօնին արժանաւորութեան հասնելու արգելք ունեցողները ինքնին յայտնուելով, Ազգայնոց ընտրութիւնը ճանաչողութեամբ կատարուելու տրամադրութեան մէջ գտնուեր է : Քաղաքայինք հանգերձ Եկեղեցականօք 'ի մի վայր գումարուելով՝ Եկեղեցականաց ցոյց տուած անձանց մէջէն Ազգին Հայրապետն ընտրեր են, երբեմն պարզապէս միաձայն աղաղակ բառնալով, երբեմն ատենական կարգօք կանոնօք վարուելով . և երբ ընտրութիւնը կատարուեր է, ալ բնաւ մէկուն վաւերացմանը սպասելու հարկ և օրէնք չըլլալով, ընտրեալը յախոռ Հայրապետութեան բազմեր ու կաթողիկոսական մատանին ու քողը ընդունելով Հայրապետութեան օծումն առեր է :

Այս է ահա պատմութեան մնացորդաց մեղ սովորեցուցածը՝ իբրեւ հիմնական տրամադրութիւնք կաթողիկոսաւ

կան ընտրութեան կամոնաց . ասոնց համեմատ կատարուեր են կաթողիկոսաց մեծ մասին ընտրութիւնը :

Թէպէտեւ եղեր են կաթողիկոսներ՝ որ իրենց յաջորդ ներն իրենք ընտրեր են . մեր թագաւորներն ալ ընտրեր են շատ անդամ զկաթողիկոսներ . ինչպէս նաև Նախարարք , Եպիսկոպոսունք միայնակ կամ ժողովրդեան հետ մէկտեղ . երբեմն նաև սոսկ ժողովուրդն աղաղակաւ ընտրեր է զկաթողիկոս , և վերջին ժամանակները կաթողիկոսական դահին մերձակայ Եկեղեցականք միայն . շատ անդամ Ս. Էջմիածնի Միաբանութիւնը . երբեմն ալ կոստանդնուպօլույ Պատրիարքները . բայց ասոնց ամենն ալ ընդհանուր կանոնի զարտուղութիւններ եղած են , և ազգին քաղաքական դժուարութեանց և տառապանաց ժամանակ՝ կամ անպայման վատահութեան և կամ անիրաւ բռնաւորութեան արդիւնք եղած են : Ազգին առաջին Հայրապետ և Լուսաւորիչն հոգւոց մեծն Գրիգոր՝ Աստուածային յայտնութեամբ ընտրուեր է՝ Հայկալն թագաւորին նախարարաց և ժողովրդականաց ամենուն կամոք . և խնդրանոքը . բայց Լուսաւորիչ ինքն որոշեր է իր յաջորդը , և այսպէս պէտք էր ըլլալ , վամն զի Ազգը նոր լուսաւորուած ըլլալով Քրիստոնէական հաւատոյ լուսովը , կատարեալ և անպայման վըստահութիւն ունէր իր Լուսաւորչին՝ ինչպէս նաև անոր յաջորդին վրայ , որով մտադիւր և իրաւամբ ձգած է անոր՝ յաջորդ Հայրապետին ընտրութեան իրաւունքը որ իրն էր , և անոր ընտրելովը ինք ընտրած կը համարուէր .

Թագաւորներն ալ ընտրեր են զկաթողիկոսներ , ո՛չ միայն ազգայինք , այլ և օտար իշխաններ , մամաւորապէս Պարսից թագաւորները և Շահարմէն կոչուած Հագարացի բռնաւորները , որ շատ անդամ մերայնոց ձեռօք անուղակի կերպով ուղաճնին կը բարձրացունէին կաթողիկոսական Աթոռը . բայց ասոնք բռնաւորութեան արդիւնք են և ո՛չ այլ ինչ . Ազգն այսպիսի պարագայից մէջ իր գանուած վիճակին համեմատ վարուելով կամ լոելեայն ընդուներ է նորընտիր կաթողիկոսը՝ եթէ արժանաւոր դտեր է զայն իւր կոչման , և կամ ինք թագաւորին կամ բռնակալին դէմ

բողոք բառնալու կարողութիւն չէ ունեցեր : Բայց երբեմն
նաև ասոր հակառակ բողոք և աղաղակ բարձեր է , մեր
ժեր է այն բառաւորական կաթողիկոսը և ուրիշ մը ընտ-
րեր ու կաթողիկոսացուցեր է անոր տեղ :

Եկեղեցականք ալ ընտրեր են շատ անդամ զկաթողի-
կոսս , և երբեմն միայն եկեղեցականք , առանց քաղաքա-
յին անձանց մասնակցութեան : Բայց ե՞րբ , Ազգին ցիր և
ցաննուաճեալ և գերեալ տառապելի ժամանակներուն մէջ .
այնպէս որ եթէ Քաղաքայինք ուղէին աշ թերեւս պիտի
չը կարողանային մասնակցութեան իրաւունքնին 'ի գործ
դնել , մերթ առ ահի բռնակալաց , և մերթ առ գժուա-
րութեան ճանապարհաց և 'ի մի վայր գումարելոյ ,

Բայց ժողովուրդն ալ այսպիսի չափազանցութեանց մէջ
գտնուեր է երբեմն : Երբ Սուրբն Ներսէս Շնորհալի վախ-
ճաներ է , անոր եղբօրսրդին Գրիգոր Տղայ՝ յուղարկա-
ւորութեան հանդիսին գտնուելով , ժողովուրդն անոր
շնորհազարդ վեհ կերպարանքին ու խմաստալից բանեցն
զմայլելով՝ միաբերան աղաղակ բարձեր ու զնա ինքն Գրի-
գոր կաթողիկոս խնդրեր է , և ըստ այսմ խնդրանայ՝ որ
առաւել ստիպման կերպարանք ունի քան թէ ընտրու-
թեան , երանելին 'ի գահ կաթողիկոսութեան համբարձեր
է հաճութեամբ և օծմամբ Եպիսկոպոսաց :

Ասոնց ամենն ալ եղեր կատարուեր են , բայց՝ ինչպէս
որ վերն ըսինք՝ իրբեւ զարտուղութիւն ընդհանուր կանո-
նաց , որով Ազգը 'ի սկզբանէ անտի իր Հայրապետին ընտ-
րութիւնն ինք ընել կարգադրեր է Փայտակ և բաշարակ , այս-
ինքն ազդային ամեն կարգի և աստիճանի արժանաւոր
անձանց ձեռօք , և միայն անոնց ձեռօք : Օտարը երբէք
իրաւամբ ձեռօք ձգած չէ՝ անոր մէջ . Բայց միթէ կար-
կառած ալ չէ . — այո՛ . Սուրբն Գրիգոր Պահաւունիին՝
Շնորհալոյն եղբօրը կաթողիկոսութեան ժամանակ , Յու-
զանդիոյ կայսերութեան և Յունական Եկեղեցւոյ Պատրի-
արքութեան կողմէն առաջարկութիւն կ'ըլլայ մեր հայ-
րենի Եկեղեցին Յունականին հետ միաւորելու , և այս նը-
պատակաւ կայսեր և Պատրիարքին կողմէն պատգամաւո-

ըութիւն մը կը ներկայանոց Հայկազանց կաթողիկոսին՝ ինն դլուխ առաջարկութիւն բերելով Յունական Եկեղեցւոյ կողմէն, որոնց իններորդն է. « Զի ընդունիցին Հայք պատահած կաթողիկոսին՝ միայն ՚ի Թագաւորէն Հոռոմոց » :

Առ այս Հայրապետն Հայոց հանդերձ Եպիսկոպոսօք պատասխանի պատրաստեց այսպէս. « Վասն իններորդին՝ աղաչեն Հայք թոյլ տալ Խորեակ ընտրութեամբ կացուցանել կաթողիկոս, զի ընդ իշխանութեամբ զանազան աղդաց գոլով մեր, ասեն, դժուարին է ընտրութեամբ կայսերն դնել կաթողիկոսուն : Եւ որպէս զի այս ինդրական պատասխանին իւր նշանակութեան ծանրութիւնը չը կորմնցունէ, յաւելուն առ այն թէ « զաթուն Անտիոքայ՝ եթէ հնար է՝ և ըզ թէմն նորա կալցի կաթողիկոսն Հայոց . և յորժամ այս լիցի, ընտրութիւն կաթողիկոսին կախեացի պատասխան կայսերն»: Յունաց կայսրն ու տիեզերական Պատրիարքը եւ կեցած սոյն ինդիրը կրկնելէ, և ինն առաջարկութիւններէն միայն երկուքովը բաւականանալ որոշեցին :

Միթէ յայտնի չե՞րեւիր այս պատմութենէն որ մեր Եկեղեցին Հայրապետական ընտրութեան համար չը կրնար եզեր ընդունիլ օտարի միջամտութիւն, թէև օտարն ըլլայ Յունական կայսր մը, և իր միջամտութիւնը Յունական Եկեղեցւոյ դլուխ տիեզերական Պատրիարքի մը համահաճութեամբը զօրութիւն ստացած ըլլայ : Ի՞նչ դժուարութիւն կար մեր նախնեաց ընդունիլ Բիւզանդիոյ կայսեր առաջարկութիւնը, որ մեր Ազգայնոց մէկ մասին վրայ տիրող իշխանն ըլլալէ զատ, Ս. Եկեղեցւոյ հարազատ ծիրանածնունդ թագաւորներէն էր, և կոստանդնուպոլայ Պատրիարքն ալ անոր կը համաձայնէր . և եթէ մերայինք ընդունէին սոյն առաջարկութիւնը, քաղաքականապէս Ազգին մեծ ծառայութիւն ըրած չէի՞ն համարուեր : Յուղանդիոյ հզօր կայսեր հաւատակցութեան չնորհիւ՝ անոր մասնաւոր պաշտպանութիւնը գրաւելու հարկ և կարօտութիւն չը կա՞ր արդեօք նոյն ժամանակները, որ մեր Ազգին երկրորդ հարստութեան տունը կործանած, Ազգայինք մեծ մասամբ մեծին Հայաստանի վրայ բռնացող հեթանոսաց

ձեռքը մատնեալ, և Ասիոյ Արեւմոեան կողմը՝ Ռուբին Եանց փոքրիկ և տակաւին խիստ տկար տէրութենէն զատ Ազգային իշխանութեան ոչինչ նեցուկ չէր մնացած : Այս՝ կարօտութիւն կար, և ոչ միայն կարօտութիւն, այլ երկիւղ ալ կար, որ եթէ մերոնք Յունական առաջարկութիւնները մերժեն, թերեւս Յունաց կայսրութիւնն առիթ առնելով Հայաստանի մնացորդաց և մասնաւորապէս կիւլիկիոյ փոքրիկ բայց անկախ իշխանութեան վրայ յարձակում ընէր, և աղդին վերջին յոյսն ու միակ մասիթարութիւնն ալ կորնչէր յաւիտեան : Բայց մեր նախնիք այս առարկութեանց և դիտողութեանց և ոչ մէկուն ունին մատուցին, այլ Հայրենական Եկեղեցույոյ օրինաց նախանձախնդրութեամբ գոտեւորեալ՝ համարձակ պատասխանեցին կայսեր, և ինդրոց ձեւով անոր հրամանը մերժեցին :

Կաթողիկոսական ընարութեան վերաբերեալ սոյն ընդհանուր սկզբունքին զատ՝ պատմութիւնն անոր մէկ քանի տրամադրութիւնները կը յայտնէ, որով կը տեսնեմք թէ մեր նախնիք Արշակունեանց թագաւորութեան վերնալէն ետքը, տեսնալով օտարազգի բունաւորաց ազդեցութեամբ մէկ քանի փառամոլ Եկեղեցականաց կաթողիկոսութեան համելը, և երբեմն նաև մէկ քանիին մէկէն զանազան տեղուանք նոյն բարձր աստիճանին ընտրուիլը, այնպէս որ մի և նոյն ժամանակ մինչեւ հինգ վեց կաթողիկոս երեւան ելած են Ազգին մէջ, գրիգոր Պահլաւունի օրինաւոր կաթողիկոսին նախագահութեամբ Եկեղեցական Սինօդ ըրեր են և օրէնք դրեր են « Զի առանց հաւանութեան չորից աթոռոց եպիսկոպոսաց ո՞չ ոք նստցի կաթողիկոս, որք են Եպիսկոպոսն Քջնոյ, Հաղբատայ, Եւստաթէու՝ որ 'ի Սիւնիս, և Թաղէոսի վանաց որ յԱրտազ», Բայց այս օրէնքը շատոնց անգործադրելի եղած է, նոյն իսկ յիշեալ չորս Եպիսկոպոսական Աթոռոց պակասելովը :

Բաց յայսմանէ, Մխիթար կաթողիկոսին 'ի սկիզբն չուրեքտասաներորդ գարու Հռովմ գրած թուղթին մէջ յիշատակութիւն կը գտնուի Ազգային կաթողիկոսաց ընտրութեան եղանակին վրայ սյսպէս .

“ Ժողովին հրամանաւ Արքայի Արքեպիսկոպոսունք , եւ պիտօպառունք . . . իւրաքանչիւր ոք ’ի նոցանէ տայ զանուն միոյ ուրուք յեպիսկոպոսաց կամ ’ի վարդապետաց . . . և զանուանն գրով տան թագաւորին ընդ կնքով իւրեանց , և եթէ բազումք իցեն լիճակեալքն , հրամայէ թագաւորն զի միաբանեսցին ’ի վերայ երկուց կամ երից , և ապա թագաւորն հանդէ՞յ ժողովը ընտրէ յերից ’ի նոցանէ զմին զոր կամի , և յաւուր օծութեան անդ՝ թագաւորն ինքնին ծունք կրկնեալ դնէ զմատանին ’ի ձեռս նորա համբուրելով զաջ նորին , և դառնայ ’ի տեղի իւր , և յայնժամ առնուն զնա առաջնորդք , և օծանեն ըստ օրինի կաթողիկոսութեան ” :

Ահա այս տրամադրութիւններն ալ կ’ապացուցանեն որ Ազգն ինք կ’ընտրէ զիւր կաթողիկոսը իւր կրօնական և քաղաքային աստիճանաւորաց ձեռոք , և օտարի ազգեցութեան առաջքն առնելու համար ամեն պէտք եղած միշոց ’ի գործ դրած է :

Արդ՝ կաթողիկոսական յանձնաժողովս Ամենայն Հայոց կաթողիկոսութեան արդի ցաւալի կացութիւնը և ընտրութեան ներկայ եղանակին հակառակ մեր նախնական օրինաց տրամադրութիւնները տեսնելով , իր պաշտաման Ա. և Բ. կէտերուն կատարմանը համար բաւական կը համարի յայտարարութիւն ընել առ պատկառելի ժողովդ , թէ կանոնք կոստանդնուպոլիսի արքունիք վկանուն և կանոնքիուսէ ընդունուելուն արդի առհմանաւորութեան հիմանական առաջնայն էլեմենտներն են հարցուք , և պէտք է ամենայն ինչ մեր Եկեղեցույ նախնական օբինացն առ առանդութեանց վերածել :

Այս յայտարարութիւնը ընելէ ետեւ՝ յանձնաժողովս իր պաշտաման երրորդ կէտին կ’անցնի , այն է Տաճկաստանի Հայոց կաթողիկոսական ընտրութեան մասնակցելու եղանակին :

ՄԱՍՆ Գ.

Յանձնաժողովս նկատելով որ կաթողիկոսական ընտրութեան մասին ընդհանուր և որոշ օրէնք մը չկայ՝ որուն համեմատ կարենան վարուիլ զանազան երկիրներու մէջ

դանուած ազգայինք , և Պալաժէնեայի կանոնն ալ՝ որչափ և անընդունելի է՝ բայց և այնպէս նոյն խսկ Ս. Էջմիածնայ մէջ ճշդիւ չէ կրցած գործադրիլ նախորդ կաթողիկոսաց ընտրութեան ժամանակ , ուստի խորհեցաւ Տաճկաստանի Հայոց մամնակցութեան այնպիսի եղանակ մ'առաջարկել որ թէ՛ ուրիշ տեղերու ազգայնոց մամնակցութեան եղանակին վարքը 'ի շատէ արմարելով դիւրութեամբ գործադրելի ըլլայ , և թէ՛ մեր՝ Եկեղեցւոյ կանոնաց ազգային սովորութեանց և իրաւանց հնար եղածին չափ համաձայնի :

Այս նկատմամբ , յանձնաժողովս հետեւեալ կերպիւ կը ծրագրէ Տաճկաստանի Հայոց մամնակցութեան եղանակը :

Ա. Ս. Էջմիածնի կաթողիկոսը ամենայն Հայոց ընդհանուր Հայրապետ և Հոգեւոր Տէրն ըլլալով , իր ընտրութիւնը ազգովին կ'ըլլայ :

Բ. Ս. Էջմիածնին , Հոյաստանեայց Մայր Եկեղեցին , Աստուածորդւոյն հրաշալի ճարտարապետութեամբը Ս. Լուսաւորչին ձեռօք շինուած , անոր հայրապետական Աթոռն և համօրէն հայկազնոյ հոգեւոր միութեան կեդրոնն ըլլալուն համար , ամենայն Հայոց կաթողիկոսական գահը միշտ հօն կը մնայ , և հետեւարար կաթողիկոսին վերջնական ընտրութիւնն ալ հօն կը կատարուի :

Գ. Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրութեան Տաճկաստանի Հայոց մամնակցութեանը համար , նախ և առաջ կ. Պօլսոյ Եկեղեցականք՝ վիճակային ժողով գումարելով կաթողիկոսական ընտրելեաց հանդամանքը կ'որոշեն , այսինքն՝ Ազգին մէջ գտնուած բարձրաստիճան Եկեղեցական ներէն միայն զանոնք՝ որ կաթողիկոսական աստիճանին արժանանալու արդելք մը չունին , կը զատեն , և անոնց ցուցակը ժողովոյ անդամոց ստորագրութեամբ կը վաւերացնեն :

Դ. Սոյն ցուցակը՝ Տաճկաստանի Հայոց ընդհանուր թիւնն օրինաւորապէս ներկայացընող Ազգային Երեսփոխանական ընդհանուր ժողովը կը ներկայացնուի , որ անոր մէջէն և միայն անոր մէջէն՝ գաղտնի քուէարկութեամբ երեք ընտրելի կորոշէ , Եթէ առոնցմէ մէկը քուէից բացարձակ

առաւելութիւն չստանայ , Երկրորդ անգամ՝ քուէարկութիւն կըլլայ Երեք առաւելագոյն քուէ ստացողաց վրայ , և սոյն Երեք ընտրելիք իրենց ստացած քուէից շատութեան կարգաւ ցուցակի մը մէջ կ'արձանագրին :

Ե. Տաճկաստանի Հայոց առաջնօրդութիւնները՝ Սոյ և Աղթամարայ կաթողիկոսութեանց սահմաններուն մէջ գըտ նուող վիճակներուն հետ 65 ըլլալով , Ընդհանուր ժողովոյ կողմէն ընտրուած Երեք ընտրելեաց ամեն մէկը 130 քուէի արժէք կ'ունենան , այնու իրաւամբ որ բոլոր Տաճկաստանի Հայոց թէ Եկեղեցական և թէ աշխարհական ընտրուած ամենուն ներկայացուցիչ ազգային կեդրոնական Ընդհանուր ժողովով ընտրուած են :

Զ. Տաճկաստանի Հայոց Երեսփոխանական ընդհանուր ժողովը Երկու պատգամաւոր կ'ընարէ , մին Եկեղեցական և միւսն աշխարհական , որք Ա. Էջմիածին կ'երժան , և Տաճկաստանի Երեք ընտրելեաց անունները և անոնց ամեն մէջ կուն 130 քուէի արժէք ունենալը յայտնով Ընդհանուր ժողովոյ պաշտօնական գիրը Սինօդին և ընտրող ժողովին ներկայացնելէ ետեւ , Ա. Էջմիածնի տաճարին մէջ Երկրորդ անգամ կատարուելիք քուէարկութեան ժամանակ՝ իւրաքանչ չիւր պատգամաւոր՝ իրեն յանձնուած 65 ձայնի արժէքով քուէնին կու տան՝ միայն այն բարձրաստիճան Եկեղեցականին՝ որ Տաճկաստանի ընդհանուր ժողովին մէջ քուէից բացարձակ առաւելութիւն ստացած է :

Ե. Ա. Էջմիածնի Տաճարին մէջ ներկայացեալ համազգային պատգամաւորներուն ըրած քուէարկութեան արշդիւնքը յայտնուելէն ետեւ , ամենէն աւելի քուէ ստացող եպիսկոպոսն օրինաւորագէս հոգեւոր տէրէ Հայաստան եաց Եկեղեցւոյ և կաթողիկոս ամենայն Հայոց սփուելոց ընդամենայն տիեզերս :

Յանձնաժողովս աներկմուտ է թէ այսորէս Համադրտիսն օրինաւոր ընտրութեամբ որոշուած կաթողիկոսը հանելի կ'ըլլայ նաեւ ամենայն Ռուսաց Վեհափառ կայսեր , որ մեր Ազգային Եկեղեցւոյ մայր Աթոռին Ա. Էջմիածնի Երկ-

ըին տէր և մեր Աղդայնոց մէկ մասին տիրող իշխանն ըլլաւ լու իրաւամբ՝ ամենայն Հայոց կաթողիկոսի աղդովին ընտրութեանց իւր բարձր հաճութիւնը չնորհած է միշտ, և թէ կարենցի Յովիշաննէս կաթողիկոսին և թէ Ներսէս կաթողիկոսի ընտրութեան ժամանակ, մեր Եկեղեցւոյ ինքնագոյութեան նկատմամբ ցոյց տուած Քրիստոնէավայել ու մարդասէր ընթացքովը իրաւունք կու տայ Յանձնաժողովիս հաւասարակութեան որ այս անգամալ միեւնոյն չնորհէն չը զըրկուիր Հայոց Աղդը:

ՄԱՍՆ Դ.

Յանձնաժողովս ամենայն Հայոց կաթողիկոսութեան խնդրոյն վրայ իր գիտողութիւններն ու ծրագիրը պատկառելի Ժողովոյդ ներկայացնելէն ետեւ, պարտ կը համարի Սայ և Աղթամարայ կաթողիկոսութեանց վրայ դարձունել Ժողովոյդ ուշադրութիւնը, որպէս զի Աղդային Եկեղեցւոյ նուի ըապետութեան ծայրագոյն աստիճանին վերաբերեալ ամեն պարագայններն ակներեւ ունելով, Ընդհանուր Ժողովդ պարտ ու պատշաճ տնօրէնութիւնն ընելու դիւրութիւնն ունենայ:

Յայտնի է որ այս միջոցիս Սայ և Աղթամարայ կաթողիկոսութեանց աթոռներն ալ պարագ են, ինչպէս ամենայն Հայոց կաթողիկոսութեան գերագահ Աթոռը. և այս երկու աթոռոց վրայ ալ խնդիր երեւան ելած է Աղդին մէջ, խնդիր՝ որ ըստ օրինի լուծուելու համար լուրջ խորհրդածութեան միանգամայն և խոհեմութեան կը կարօտի. վասն զի՝ եթէ օրինաւորապէս չորոշուի, կրնայ Աղդին մէջ շփոթութեան և գժութեան խարոյին արծարծել և մինչեւ անգամ աղդակործան պառակտմանց տեղի տալ:

Յանձնաժողովը Սայ եւ Աղթամարայ կաթողիկոսաց ընտրութեան վրայ իր պատշաճ դատած կարգադրութիւնը պատկառելի Ժողովոյդ ներկայացընելէ առաջ ներողամութիւն կը խնդրէ երկու խօսք ըսել Ընդհանրապէս սոյն կաթողիկոսութեանց վրաց:

Մեր Աղդ. Եկեղեցւոյ նուիրապետութեան կարգը կը

պահանջէ որ Հայաստանեայց Եկեղեցւոյ պաշտօնէից գլուխ Հովուապետը մէկ ըլլայ , որ ամենայն Հայոց կաթողիկոսութեան տիտղոսն կը կրէ և ծայրագոյն Հայրապետութեան նուիրական պաշտօնը կը վարէ : Այս իրաւամբ մեր Եկեղեցւոյ մէջ այսօր երեք կաթողիկոսական աթոռ մէկ տեղ գըտնուիլը զարտուղութիւն մ'է Հայրենական Եկեղեցւոյ օրինաց նկատմամբ , և հաւաստի է որ եթէ այսօր Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ մէկ կաթողիկոս կեցած ատեն ուրիշ մ'ալ ուրիշ տեղ հաստատելու խնդիր երեւան ենէր , ամեն Ազգասէր և Եկեղեցւոյ բարեկարգութեան նախանձախնդիր Ազգայինք դէմ կը կենային անոր հաստատութեանը :

Բայց այլ է մէկ բանի մը չկեցած ժամանակ նոր ՚ի նորոյ երեւան ենելուն արգելք ըլլալ և ընդդէմ մարտնչիլ , և այլ է արգեն հաստատուած եւ դատաւոր տեւողութեամբ մշտնջենաւորելու ոյժ և ամրութիւն ստացած բան մը կործանելու կամք ընել : Առաջինը պարտք է ամենուն և կը յաջողի շատ անդամ , եթէ ըստ օրինի ջանք ըլլայ , և ժամանակ չկորուսանելով աշխատուի . բայց երկրորդը շատ անդամ ծանր է ձեռնարկել , և զանազան պարագայներ խոհեմութեան պարտք կը դնեն ամենէն եռանդուն ազգասիրին մեղմել իւր ընթացքը , և ժամանակին յանձնել ամեն բան կատարելապէս կարդագրելու հոգը :

Այսու խորհրդածութեամբ Յանձնաժողովս արժան կը համարի հրապարակաւ յայտնել որ Սայ և Աղթամարայ կաթողիկոսական Աթոռոց համար իր կարծիքն է՝ ո՛չ միայն անոնց բարձմանը վերաբերեալ խնդիր չը յարուցանել , այլ նաև զանոնք երկուքն ալ Ազգային գերագոյն իշխանութեան պատկառելի լնդհանուր ժողովոյդ խնամոցը ենթարկել , և առաջարկել որ Ազգը մինչեւ ցայսօր սոյն Աթոռոց նկատմամբ բռնած բարձի նողի ընթացքը փոխէ , և զանոնք իր խնամատարութեան ենթակայ ընելով հոդ տանի բարեկարգել , և Եկեղեցական նուիրապետութեան կարդաց նկատմամբ ներդաշնակաւոր դրութեան մը մէջ մոցունել :

Այս նպատակաւ Յանձնաժողովս կ'առաջարկէ որ լնդհանուր ժողովը վճիռ տայ և տնօրինութիւն ընէ որ այսու

նեղու Սայ անուանին կալնողի կրու յաջորդութեան նկատմամբ Աջապահ կոչուած էր ճը անցանց ըրած պահանջողութիւնն անընդունելի է, և թէ այս աթոռոյն, և թէ՛ Աղթամարաց աթոռոյն համար կաթողիկոս ընտրելու իրաւունքն Ազգային Ընդհանուր ժողովին իրեն սեպհական ըլլալով, նա՛ կ'ընտրէ կաթողիկոսները, երկուքին ալ Միաբանութեանց կողմէն ներկայացուած օրինաւոր ցուցակի մէջէն զատելով, ինչպէս որ Ս. Երուսաղէմի Պատրիարքի ընտրութեան համար ըրած է և կ'ընէ :

Եթէ Ընդհանուր ժողովն այս վճիռը տալու կամք ընէ, Յանձնաժողովիս կը մնայ սա՛ հետեւեալ յօդուածներն առաջարկել, իրեւ ընտրական օրէնք Սայ և Աղթամարաց կաթողիկոսաց ընտրութեան :

Ա. Երբ Սայ կամ Աղթամարաց կաթողիկոսը վախճանի, Միաբանութիւնն իր. Տնօրէն ժողովոյ հրաւիրմամբ Ընդհանուր ժողով կազմելով Տեղապահ մը կ'ընտրէ կաթողիկոսութեան աթոռոյն, և զանի կ'առաջարկէ կեդրոնական վարչութեան խառն ժողովոյ հաստատութեանը :

Բ. Միաբանութեան Ընդհանուր ժողովը տեղապահի նախագահութեամբ ատեան կազմելով, (գաղանի քուէարկութեամբ) ցուցակ մը կը պատրաստէ կաթողիկոսութեան աթոռը բարձրանալու արժանաւոր Եկեղեցականաց, որուն մէջ գուելու անձինք պէտք է 40 տարին լրացուցած և գէթ օ տարիէ 'ի վեր Եկեղեցական աստիճան ընդունած ըլլան, Աթոռոյն ու Միաբանութեան ամեն պարագայից տեղեկութիւն ու հմտութիւն ունենան, և որ և իցէ գատի ներքեւ չը գտնուին տէրութեան կամ Ազգին կողմէն :

Գ. Սոյն ընտրելեաց ցուցակը՝ որ գոնէ երեք անուն պիտի պարունակէ, Միաբանութեան Ընդհանուր ժողովոյ մեծագոյն մասին ստորագրութեամբ և Տնօրէն ժողովոյ անդամոց և կաթողիկոսական տեղապահին կնքովը վաւերանալով կը զրկուի կեդրոնական վարչութեան խառն ժողովոյ, որ իր ունեցած դիտողութիւններովն հանդերձ զայն կը ներկայացունէ Ազգ. Ընդհանուր ժողովոյ :

Դ. Ընդհանուր ժողովը կ'ընտրէ զկաթողիկոս նայն ընտ

բելեաց ցուցակին մէջէն գաղտնի քուէարկութեամբ և
բայարձակ առաւելութեամբ քուէից :

Ե. Կոստանդնուպօլսոյ Պատրիարքը Ընդհանուր ժողովոյ
ընտրութեան գործադրութիւնը կ'ընէ նորընտիր կաթողի-
կոսին օծման համար պէտք եղածը տնօրինելով և բարձ-
րագոյն դռնէն մասնաւոր թագրիրով հաստատութեան
ֆէրման առնելով :

Զ. Նորընտիր կաթողիկոսն իր ընտրութեան՝ լուրը կը հա-
զրդէ ամենայն Հայոց կաթողիկոսին պատշաճաւոր եղանա-
կաւ, և շրջաբերական կոնդակիով ալ իր թէմերուն մէջ գըտ-
նուող ժողովրդեան կը ծանուցանէ իր գահակալութիւնը :

Սոյն ընտրական օրէնքը Սոյ և Աղթամարայ կաթողի-
կոսաց ընտրութիւնը կ'ապահովիչ, և ասով Ազգը ազատ կը
մնայ ապագային մէջ անարժան անձանց կաթողիկոսական
յաթու բազմիլը տեսնելէ, և ընտրութիւնները կը դադրին
օտարազդի բռնաւորաց կրից և կամ համազդի անարժան
եկեղեցականաց փառասիրութեան ասպարէղ ըլլալէ :

Բայց ասով ամենայն ինչ չը կատարիր : Յանձնաժողովս
կը փափաքի որ Ազգը վերոյիշեալ աթոռոց ներքին բարե-
կարգութեան վրայ ալ կանոններ հաստատելու հոգ տանի :
և Սոյ ու Աղթամարայ վանքերը դպրոցներ հիմնելով՝ ե-
րեքին ալ արժանաւոր Միաբաններ հասցունելու ջանք ընէ :

Յանձնաժողովս աներկմիտ է որ սոյն երկու վանքերը
ազգային ուրիշ վանօրէից կարգին՝ իրենք ալ Ընդհանուր
կանոններ պիտի ունենան, և ասոնց Միաբանութիւններն
ալ Ա. Երուսաղէմի Միաբանութեան նման Ազգին օդտա-
կար ըլլալու դրութեան մէջ պիտի մննեն :

Բայց Յանձնաժողովս ուրիշ փափաք մ'ալ ունի, զոր չի
խորչիր պատկառելի ժողովոյդ ներկայացնելէ, այն է՝ օգուտ
քաղել այս անդամ թէ սոյն երկու կաթողիկոսութեանց ա-
թոռներուն և թէ ամենայն Հայոց կաթողիկոսութեան Ա.
Էջմիածնի գերագահ Մայր Աթոռոյն երեքին մէկէն թափուր
մնացած գտնուելէն, երեքին ալ գահակալներն ընտրելու
առթիւ, երեքին մէջ պատշաճաւոր և ներդաշնակաւոր յա-

բարերութիւն հաստատելով որ կրնայ ապագային մեծապէս
օդնել ազգային եկեղեցական նուիրապետութեան կատար
եալ և օրինաւոր կերպով բարեկարգութեան :

Սոյն մտօք Յանձնաժողովս պարտք կը համարի Ընդհա
նուր ժողովոյդ առաջտրկել որ Սայ և Աղթամարայ կաթո
ղիկոսաց ընտրութեան անմիջապէս ձեռնարկութիւն չըլ-
լայ . և մինչեւ որ ամենայն Հայոց կաթողիկոսն ընտրուի ,
այն երկու աթոռներն օրինաւոր տեղապահներու ձեռօք
կառավարելու տնօրէնութիւն ըլլայ :

Յանձնաժողովս կը կարծէ որ եթէ ամենայն Հայոց կա-
թողիկոսն ընտրուելէ ետեւ Աղդային Ընդհանուր ժողովն
անոր ՚ի Պոլիս առժամանակեայ ներկայութիւնը վայելելու
պատիւն ունենայ , և նոյն միջոցին Սայ և Աղթամարայ կա-
թողիկոսաց ընտրութիւններն ընելով երկոցուն ալ օծումը
՚ի ներկայութեան ամենայն Հայոց գերագահ կաթողիկոսին
կատարուիլը տեսնելու բաղդին արժանանայ , մեծ և մեծ
ծառայութիւն մատուցած կը համարուի Աղդային Եկեղեց-
ւոյ . վասն զի այս առթիւ Սայ և Աղթամարայ կաթողիկո-
սաց Սուրբ Էջմիածնի Մայր աթոռոյն հետ ունենալու յա-
րաբերութիւններն օրինաւոր հիմնաց վրայ հաստատուելով ,
Եկեղեցին ներկայ ժամանակիս մէջ խաղաղութիւն և ազա-
գային ալ կատարեալ և օրինաւոր բարեկարգութիւն վայե-
լելու գրութեան մէջ կը մտնէ , չնորհիւ ջեառն և միջնոր-
դութեամբ Ընդհանուր Ժողովոյ . որում մնամք

Ամենախոնարհ անձնուերք

Առջնաժողով Կաթողիկոսական Յանձնաժողովուն

Արքայի Եկեղեցու

7/11. Հունիս Եպիսկոպոս (առողջութեան)

Առքեփեան Սորբին

Առքեփեան Սորբին Պեր

Իսթիւտի կորպորատոր (առողջութեան)

Առքեփեան Պերիկոր

Հալաթիա ,

Առաջնորդարան Ս. Կուսաւորիչ Եկեղեցւոյ .

29 Ապրիլ 1866.


Հայոց շահութ


ու արքա 88





ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՔԻՒՐՔՃԵԱՆ





4200

4200



4061